

ՏԱՃԱՐ

ԿՐԹՆԱ-ԵԿԵՂ ԵՑԱԿԱՆ

ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆՂԵՍ

Ա. ՏԱՐԻ

15 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1909

ԽՐԱՍԴՐԱՊԵՏ

ԳԱՐԵԳԻՆ ՎՐԴ. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

ՎԱՐԻՉ

ՂԵՒՈՆԴ Ծ. Վ. ԴՈՒՐԵԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԿՐԹՆԱԿԱՆ ԱՐԴԻ ՄՏՔԻՆ ՀԱՆԴԵՊ
ՄԵՐ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ
ԼԵԶՈՒԻ ՀԱՐՑԸ ԱԶԳ. ԵՒ ԿՐԹՆԱԿԱՆ ՏԵՍԱԿԵՏՈՎ,
ՀԱՒԱՏՔԸ
ԱՒԵՏԱՐԱՆԻ ՄԵԿՆՈՒԹԻՒՆԸ
Ս. ԳՐՈՑ ԲՆԱՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ
ՔԱՀԱՆԱՆ ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐԻՆ ԱՌՋԵՒ
ՆԱՐԵԿԻ ՆՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ
ՀԵՐՈՎԴԻԱԴԱ (ՔԵՐՔՈՒՄԸ)
Ս. ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՒԻ ԿԱՄ ԱՐՇԱԿՈՒՆԵԱՅ ԹԱ-
ԳԱԽՈՐՈՒԹԵԱՆ ԲԱՐՁՈՒՄԸ
ՀԱՒԱՏՔԻ ՑՈՂՔԵՐ
«ՏԱՃԱՐ»Ի ՑՈՒՇԱՏԵՏՐԸ

ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ (Հարմահ)
Ե. Ե. Գ.
ԳԱՐԵԳԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ
ՋԱՐՄԱՅՐ ԴԱՀԱՆԱՅ
ՄԵԿՆԻՉ
ՂԵՒՈՆԴ Ծ. Վ. ԴՈՒՐԵԱՆ
Գ. Վ.
Յ. ՄՐՄԸՐԵԱՆ
ԼԵՒՈՆ ԷՍԱՃԱՆԵԱՆ
ԳԱՐԵԳԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ
ԹՐԳՎ. ՏԻՐԱՅՐ ՎԱՐԴԱՊԵՏ
Գ. ՎԱՐԴ-ԽԱՉ

Գին 50 փարսյ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՕՍՄ. ԳՈՐԾԱԿՑԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Պապը Ալի հաստի Սեփեքիլե փողոց Թի 27

ՅԱԶՈՐԴ ԹԻԻՈՎ ՅՈՂՈՒԱԾՆԵՐ

Տիրայր վարդապետք , Պարգեւ վարդապետք
Արիստակես Գնկ. Հիսարթեան

Զ Ե Կ Ո Յ Ց

Դաւաններէ ինքնաբերաբար դիմումներ կը հասնին Վարչութեանս՝ կրօնաթերթիս բաժանորդագրուելու խնդրանք :

Ի պատասխան այս խնդրանքներու կը յայտարարենք թէ՛ այսպիսիներու և թէ՛ ուրիշ բաժանորդ ըլլալ փափաքողներու թէ՛ կրնան դիմել իրենց պատկանած Առաջնորդարաններու կամ Թաղ . Խորհուրդներու և կամ յատկապէս նշանակուած գործակալներու և անոնց միջոցաւ իրենց դիմումը ներկայացնել և ստանալ թերթերը :


Ի դիւրութիւն կը ծանուցանենք ի ստորեւ անունները այն առաջնորդներուն և գործակալներուն , որոնց գործակցութիւնը խնդրած ենք թերթիս ի նպաստ :

ՅՈՒՑԱԿ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆՑ

”ՏԱՃԱՐ“ ԿՐՈՆԱԹԵՐԹԻ

Ադրիանուպոլիս
Ադեմանդիւրիս
Ամերիկա
Այնքապ
Ասաբազար
Արմաւ
Աֆիօն-Գարանիսար
Գաղաթիս
Գօնիս
Եգիպտոս
Եդեսիս
Եօզլաս
Երզնկա
Եւդոկիս
Զմիւռնիս
Էսկիեհիւր
Խարբերդ
Վարիս
Կեսարիս
Կիրասոն
Հալեպ
Մանչեսթր
Մարաւ
Մարզուան

Առաջն . Տեղապահ Տ . Մատթէոս Վրդպ . Ինճէկան
Միհրան էֆ . Թէլեան
Առաջ . Փոխանորդ Տ . Պօլոս Վրդպ . Գաֆթանեան
Տ . Գարեգին Քհնյ . Պօղարեան
Գրիգոր էֆ . Ակօնայեան
Փոխ-Վանահայր Տ . Մեսրոպ Ծ . Վրդպ . Նարոյեան
Տ . Գալուստ քհնյ . Տ . Գալուստեան
Առաջնորդ Տ . Բարդէն Ծ . Վրդպ . Կիւլէսէրեան
Տ . Յովհաննէս Քհնյ . Դուլումճեան
Առաջնորդ Տ . Մկրտիչ Ծ . Վրդպ . Աղաւնուհի
Ք . Թիւրաքեան էֆ .
Առաջնորդ Տ . Խորէն Ծ . Վրդպ . Դիմաքսեան
« Տ . Երուանդ Վրդպ . Փէրտահճեան
Առաջն . Տեղապահ Տ . Արտաւազդ Վրդպ . Գալէստէրեան
« Փոխանորդ Տ . Յովհաննէս Ա . Քհնյ . Մինասեան
Տ . Գալուստ քհնյ . Տ . Գալուստեան
« Տեղապահ Տ . Դէորդ Ծ . Վրդպ . Ասլանեան
Առաջնորդ Տ . Սմբատ Ծ . Վրդպ . Սաատէթեան
« Տ . Տրդատ Ս . Եպիսկ . Պալեան
Մաթոս էֆ . Թոքատեան
Առաջն . Տեղապահ Տ . Շահէ Վրդպ . Գապարեան
Առաջնորդ Տ . Դէորդ Ս . Եպիսկ . Իւթիւճեան
Տ . Հմայեակ Քհնյ . Վարժապետեան
Յակոբ էֆ . Սրապեան



ԿՐԹՆԱ-ԵԿԵՂ ԵՅԱԿԱՆ

ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԵՍ



Ա. ՏԱՐԻ

15 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1909

ԹԻԻ 3

ԿՐԹՆՔԸ ԱՐԴԻ ՄՏՔԻՆ ՀԱՆԴԵՊ

Քաղաքակրթուած մարդուն աշխարհահայեացքը հսկայ փոփոխութիւններ կրած ըլլալով, բնական դիտութիւններու յառաջդիմութեամբ, սուր պայքարի մը հանդէպ կ'գտնուի այսօր կրօնքը, որուն հարցը այնքան ծանրակշիւ կ'ընդհանայ որքան իրեն հետ կապուած իտէալներն ալ վաւերացուած կը թուին:

Պատմութեան փոխադարձութեան համար տիեզերական երևոյթ մըն է կրօնքը, մարդկութեան չափ հին և վաղնշական, թէ իսկ միշտ նոր ձևերով փոփոխ: Մարդկային հոգւոյն անօտարանալի նախատաքուածքը, այնքան բնական՝ որքան մտածումը, այնչափ գիւրդմունքի ո՛րչափ բարիքն և գեղեցիկին զգացումները: Մարդուն էութեան գոյացուցիչ տալքն է

ան, որ միայն արտաքին բարքերը ներկայի չ'առնէր, այլ նոյնիսկ էակը, իր խորհուրդներուն, յուզումներուն և տենչանքներուն խոր պղծելին մէջ:

Երկու տալուարութիւններ կ'արթնցունեն մեր մէջ կրօնքին գաղափարը, — մեզ չընկալաւոր իրականութեան կամ աշխարհի խորհրդաւոր կեանքը, և մեր սրտին անյագ բաղձանքները: Վասնզի ամբողջ աշխարհը անիմաստ է, եթէ մարդը չկարենայ զստացնել սրտին պէտքերը: Ո՛չ մէկ գիտութիւն և արուեստ, ո՛չ մէկ գիտակցական աշխատութիւն և զարգացում կրնայ գոհացնել կեանքի յաւիտենական արժէքին հարցը: Նիւթապաշտութիւնը և սկեպտոսութիւնը, անհատապաշտութիւնն ու իրապաշտութիւնը անընդուն կը թողուն այդ խնդիրը, որուն

պատասխանը միշտ հաւատքի մը վրայ կը հանգչի:

Կրօնքը կեանքին շուրջն է, առանց որուն հոգին կ'ցամբի փաղաթարշամ: Բնական կրօնքին պէս ճշմարտութեանց և հիմնական սկզբունքներու անյարիր կոյտ մը չէ ան, այլ մեր կեանքին մէկ բազկացուցիչ մասը, էական ձայնալարը որուն վրայ կ'թրթրուան մեր զուարթ ու տխուր գործունէութեանց բոլոր նուագները: Այդ կրօնքը երբեք ինդոքական հարց մը չկրնար բլլալ, զոր մէկը դիւրաւ կրնայ գտնել իր ներսը, երբ միւրը՝ ճուրի իր էութեան ալքերուն մէջ. — «Մատիցէ այր ի խորութիւն որտի իւրոյ և բարձր եղիցի Աստուած»: Մարդը իր հոգւոյն մէջ կրնայ գտնել Աստուածը:

Խստադատ բանավարականները թերեւս նորալուր կարծիքներ (paradoxe) տեսնեն այս գաղափարներուն մէջ, կրօնքը նկատելով իբրեւ նախապաշարումներու ոսկեհիւս ցանց մը, մանուկ մարդկութեան յոյսերն ու եւրազները, վիշտերն ու ուրախութիւնները զգուշ և պարարող գեղարուեստական պատրանք մը, որուն թոյլն ու բոյրը, մեղրն ու բալասանը, արդի ազատ, չափահաս և ինքնակայ մարդը հոնայելու ոյժը չունենան: Սակայն նշանակելի է որ նա տիրական զօրութիւն մը եղած է ամէն ժամանակի մարդուն մէջ: Ան կազմակերպած է քաղաքական կեանքի ձեւերը, անոր աստուածային շունչը շարժման մէջ դրած է մարտական լէգէոնները, անոր սեղանին նուիրաբերուած է մարդկային արիութեան հրաշագեղ ծաղիկը. անոր փափուկ թերթերով հետուած են հոգւոյն վսեմ սուամները:

Անոր ոյժը ի հանդէս բերած է չքնաղ առաքինութիւններ, ուր մարդը աստուածային բարձրութիւններու վրայ կ'սաւառնի, դերազանցելով ինքզինքը և բնութիւնը: Նա վիշտերու ամպին մէջ յոյսի ճաճանչ մը կ'սահեցնէ և մեծ անէութիւնը երկնային արեւով մը կ'կենսաւորէ: Անոր համար որ հաւատքը հզօրագոյն է քան բնագիտական ծանօթութիւնները, Աստուծոյ օգնութիւնը աւելի արդիւնաւոր է քան մարդկայինը և սէրը մեծազօր՝ քան բոլոր արամախափութիւնները: Յորչափ աշխարհի և մարդկային հոգւոյն պատմութիւնը փակուած չէ, ո՛չ որ կրնայ դիտնալ թէ ինչո՞ւ համար աշխարհն ու մարդկութիւնը իրենց ինքնայատուկ ոյժերով պիտի բաւականանան, և թէ ո՞ւր պիտի յանգի իրենց զօրութեան սահմանեղբ:

Հարեանցի դիտողները իսկութիւնը չիտթելով ձեւին հետ, կ'կարծեն թէ կրօնքը այժմ մահամերձ է և ողբապառ, անընդունակ ընդհանուր զարգացման զուգընթանալու: Ընդհակառակը, նա զարմանալի կենսականութիւն և ճկունութիւն ցոյց տուած է պատմութեան մէջ, փոխափայտական, դիտական և ընկերական բոլոր մեծ յեղաշրջումներուն հանդէպ: Քրիստոնէութիւնը իբրեւ կրօններուն բարձրագոյնը, կենսաուղիք և յաւիտենականը հրաշալիօրէն իւրացուց, իր նախաքայլերուն մէջ, յունահռոմէական փոփոխութիւնն ու արուեստը, որով յաջողեցաւ բարեշրջել դասական քաղաքակրթութիւնը:

Միջին դարու մէջ Արիստոտելի դրութիւնը որդեգրելով բանաձեւեց իր վարդապետական շէնքը և կանգնեց իր շատագովական պատմեջը: Իր աշխարհ-

հիկ իշխանութիւնը կերտելով կայս-
րութեան հռոմէական գաղափարին
վրայ, հռոմի պապը պահ մը միահե-
ծան վեհապետն հանդիսացաւ Եւ-
րոպայի և քրիստոնեայ աշխարհին: Ո՛չ
մէկ բան կ'արդիւլէ զայն պատշաճելէ
արդի գիտութեան և ընկերական
կեանքի պլազման ձևերուն: Վասնզի,
կրօնքը էապէս, իբրև ոգիի և ճշմար-
տութեան պաշտամունք, վեր կը մնայ
ամէն քաղաքական և վարդապետական
կաշկանդումներէ: Նա մարդուն գի-
տակցութեան մէջ կ'կեդրոնանայ, ուս-
կից կ'ճառագայթէ անոր գաղափար-
ներուն, զգացումներուն և կեանքին
մէջ: Նա տիեզերական սէր և գերա-
զոյն բարին կ'ներշնչէ: Ըստ Հէկէլի
«Աստուած է սկիզբը բարիին, ճշմար-
տին և գեղեցիկին, որուն համար
քսաներորդ զարը պիտի կանգնէ իր
պաշտումի սեղանները»:

Կրօնքը իբրև կեանք և ոգի պէտք չէ
որ նիւթական ձևերու մէջ քարանայ: Ասկէց
կը ծագի սա կարևոր հարցը
թէ տառը կամ արտաքինը ո՞րքան գեր-
պիտի կատարէ կրօնական կեանքի ար-
տայայտութիւններու մէջ: Ինքնայայտ
է թէ առաւելազանց պերճութիւնը
կ'մնասէ ոգիին, ինչպէս սոսկ զգա-
ցումն ալ երևակայական և անընդո-
նելի կ'մնայ: Փիխդէ գեղեցկօրէն կը
ըստարանէ այս կէտը. — Die Formel
ist die grosste Wohlthat für den menschen
«Բանաձևը, մարդուն համար, բարեգոր-
ծութեան մեծագոյնն է»: Հոգեբա-
նօրէն առարկայական տարրը անհրա-
ժեշտ է զգացման յայտնութեան եւ
ըմբռնումին համար, ինչպէս մարմինը
հոգւոյն համար, միութեամբ և ներ-
դաշնակութեամբ:

Կէօթէի պատկերը աւելի շքեղօրէն

կ'ցոլացնէ այդ ճշմարտութիւնը, «Լոյսը,
կ'ըսէ Փաուստ, չղթայուած է մար-
միններուն հետ, մարմիններէն կ'ցայ-
տէ և մարմինները կ'գեղեցկացնէ.
մարմին մը կ'կասեցնէ զայն իր ըն-
թացքին մէջ»: Զգացումները և հո-
գեկան ոյժերը կ'անդայտանան կ'ցըն-
դին առանց համապատասխան ար-
տայայտութիւններու: Պարզ, պատշաճ
և թափանցիկ արտաքինը ուրեմն ան-
խուսափելի մասը և ծածկոյթը կը
կազմէ կրօնական գեղեցկութեան:
Ըստ այսմ, ժամանակի և միջավայրի
պայմաններուն, և մարդուն ունեցած
ծանօթութիւններուն համեմատ իր
կրօնական կեանքը ծաղկած ու կեր-
պաւորուած է ի հնումն, առանց եղ-
ծելու ներքին խաղաղ ու ջինջ յա-
տակը, կամ զգացումի անշէջ հնոցը,
որ կրօնքին բոցը մշտապէս կ'նշուէ
մարդուն էութեան խորը: «Ո՛չ իմա-
ցականութիւնը, ո՛չ կամքը, կ'ըսէ
Շրայէրմախէր, մեզ չեն տանիր կրօ-
նական կալուածին մէջ: Կրօնքը ոչ
ծանօթութիւն մըն է, ոչ պատուէր
մը, այլ կեանք մը և փորձառութիւն
մը. և այդ կեանքը իր աղբիւրն ունի
մեր էութեան ամենէն խոր մասին
մէջ, այսինքն զգացումին մէջ: Կրօնին
ծանօթութենէն կարելի չէ երթալ
կրօնքին, որ սկզբնական իրողութիւն
մըն է»: Այս սողերուն վրայ կը հրա-
ւիրեմ ուշադրութիւնը այն ազատա-
խոհներուն, որոնք թեթեւ հեգնու-
թիւն մը ունին կրօնքին հանդէպ, և
որոնց ծանօթութիւնը կրօնական կեան-
քի և փորձառութեան մասին, վարկ-
պարագի հպանցումէ մը անդին չանց-
նիր:

ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ

Դպրեկանոս

ԵԿԵՂԵՑԱ-ԻՐԱԻԱԳԻՏԱԿԱՆ

ՄԵՐ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

(ՅՈՐՏՆ ԱՂԱՐԻՐՆԵՐ)

Մեր եկեղեցական կանոնագիրքը՝ որ իր հին աղբիւրներուն մէջ յաւանական է՝ տալիս է ունեցած ամբողջական հրատարակութիւն մը :

Բացի մասնական ու ցանուցիւր հրատարակութիւններէ եւ Հ. Տաշեանի «Վարդապետութիւն առաքելոց անվանական կանոնացոյ մատենանք» կարեւոր գործէն՝ որ աւտրալիան ծագում ունենալով առաջնական կանոններու հմտալից ուսումնասիրութիւնն է, քանի մը տարիներ առաջ լոյս տեսաւ Մեղիքթմանգեանի «Հայոց եկեղեցական իրաւունքը» իբրեւ ամբողջական գործ, ուր ամփոփուած են երեք Տիեզերական եւ վեց զաւտական ժողովներու կանոնները, ինչպէս նաեւ Սրբոյն Կղեմայ ընծայուած «Սահմանք եւ Կանոնք Ս. Առաքելոց»ը (էջ 127—140, 254—306) որ միւսներէն հին բլլալ կը թուի ժամանակագրաբար : Իսկ ստանց կարգին մէջ յանուն Կեսարիոյ ժողովոյն հրատարակուած կանոնները (էջ 270—273) որովհետեւ վաւերական հանգամանք մը եւ յայտնի աղբիւր մ'ալ չունին, ինչպէս իրաւամբ դիտել տուած է արդէն Մեղիքթմանգեան (էջ 183), զանց ըրած ենք բոլորովին :

«Հայոց եկեղեցական իրաւունքը»ի հեղինակը սակայն՝ ո՛չ ձեռագրական բազմաթիւներ ըրած է եւ ո՛չ ալ ընտելական համեմատութիւն մը վերը յիշուած կանոններուն հայերէնը գէթ հասկնալի վիճակի մը վերածելու նպատակով : Իր կանոնական բացատրութիւնները դրուած են՝ աշխարհաբար ու ներկայացուած ընտելաներու ներքեւ, որոնք զրաբարէն չեն փոխադրուած ապահովաբար, եւ երկասիրողը ռռաւերէն թարգմանութիւնէ մը օգտուած կ'երևի : Պիտի չուզէինք անշուշտ ստղտանել աշխատութեան այդ եղանակը, քանի որ հայ գրչագիրները տեղ տեղ ա-

զաւագուած են եւ թարգմանութիւնն ալ ընտելական հաւատարմութեամբ չկրնար պարծիլ—թէեւ՝ միեւնոյն ստան՝ կամաւոր չեղումներու ալ յայտնի նշաններ չեն պակսիր :

Խորհելով որ անօգուտ չըլլար ուղղագրել մեր հայ ընտելները, առանց թարթափելու յետադարեան հոյլ մը գրչագիրներու համեմատութեամբ՝ որը վճռական արդիւնք մը չկրնար ընծառել ինքնին, տարիներ առաջ (1899 թին) ձեռնարկած էինք յաւանքնով ճշտել զանոնք, չհռանալով հին թարգմանական շարագրական ընդհանուր ոճէն, ու բաւականանալով նշանակել ա՛յս կամ այն բառի թերի կամ անձրաւ փոխադրութիւնը թարգմանչին կողմէ :

Յունական այդ հին աղբիւրներու կարգին մէջ են նաեւ Ս. Բարսեղի կանոնները. սակայն չունենալով մեր արամադրութեան տակ ստանց ամբողջական հայ թարգմանութիւնը, թողած ենք զայն : Ուրեմն Տաճարի միջոցաւ պիտի հրատարակենք միայն հետեւեալները .

- ա. Սահմանք եւ կանոն Ս. Առաքելոց (յանուն Կղեմայ)
- բ. Կանոն ժողովոյն Անկիւրիոյ
- գ. Կանոն ժողովոյն Նեոկեսարիոյ
- դ. Կանոն Տիեզերական ժողովոյն Նիկիոյ (յաւին 325)
- ե. Կանոն ժողովոյն Անթիոյ
- զ. Կանոն ժողովոյն Սաղիկէի
- է. Կանոն ժողովոյն Լաւոյիկեայ
- ը. Կանոն ժողովոյն Գաւգրայ
- ր. Կանոն Տիեզերական ժողովոյն Կ. Պոլսի (յաւին 381)
- ժ. Կանոն Տիեզերական ժողովոյն Եփեսոսի (յաւին 431)

Ե. Ն. Դ.

ՍԱՀՄԱՆՔ ԵՒ ԿԱՆՈՆՔ Ս. ԱՌԱՔԵԼՈՅՆ

(Ի ձեռն Կղիմայ, առաջեալ հեթանոսաց)

Ա.—Եպիսկոպոս ձեռնադրեցի յերկուց հպիսկոպոսաց կամ յերկուց :

Բ.—Երէց կամ սարկաւադ կամ այլք ի

ժառանգաւորաց ի միտջէ եպիսկոպոսէ ձեռնադրեալին :

Գ.—Եպիսկոպոս ոք կամ երէց որստաքոյ քան զհրամայեալսն Տեառն վասն պատարագի եթէ մատուցանիցէ ա՛յլ ինչ ի սեղանն , կամ մեղր կամ կաթն , կամ փոխանակ զինւոյ ցքի կամ այլ պատարատութիւնս կամ հաւ (թրչուն) կամ այլ ինչ կենդանի կամ խաւարս , արտաքոյ հրամանաց Տեառն գործելով՝ բաց ի նորոց արմուտաց կամ ի խաղողոց ի գէղ ժամանակի , լուծցի :

Դ.—Արժան է ո՛չ այլ ինչ մատուցանել ի սեղանն՝ բաց ձէթ յաշտանակն (ի ճրագն) և խունի ի ժամ որոյ պատարագին :

Ե.—Ամենայն միրգք առաքեալին իբրեւ երախայրիք ի տուն եպիսկոպոսին և երիցանց , այլ ո՛չ ի սեղանն , յայտ է զի եպիսկոպոսն և երիցունք բաժանեցեն սարկաւազացն և այլոց ժառանգաւորաց :

Զ.—Եպիսկոպոս կամ երէց կամ սարկաւազ զկին իւր մի՛ հանցէ պատճառանօք երկիւղածութեան , ապա թէ հանցէ ի բաց՝ որոշեացի և ի նմին յամառեալ՝ լուծցի :

Է.—Եպիսկոպոս կամ երէց կամ սարկաւազ զսխարհական հոգս յանձն մի՛ սուցէ . ապա թէ ոչ՝ լուծցի :

Ը.—Եթէ եպիսկոպոս ոք կամ երէց կամ սարկաւազ զսուրբ օրն Հարչարանաց (պատեք) նախ քան զգարնանային զուգհասարակութիւն (իսղաքէ) , կատարեացէ ընդ հրեայս՝ լուծցի :

Թ.—Եթէ եպիսկոպոս ոք կամ երէց կամ սարկաւազ կամ այլ ոք ի կարգէ քահանայից՝ նուիրանաձն ժողովիւց ոչ հաղորդեացի , ասացէ զպատճառն . եթէ իրաւացի իցէ՝ թողութիւն հասցէ , ապա թէ ո՛չ ասացէ՝ լուծցի , որպէս պատճառ մեասու եղեալ ժողովրդեան և կարծիս սուեալ զմատուցողէն՝ որպէս թէ ոչ մատուցանէ ուղղութեամբ (ծրճոց) ⁽¹⁾

Ժ.—Ձամենայն զմտալս յեկեղեցի զհաւատացեալսն և զլոռս զրոյն՝ որք ո՛չ մնան ազօթից և սրբոյ հաղորդութեան իր-

բեւ զանկարգութիւն արարողս եկեղեցւոյ՝ ի բաց որոշեացին :

ԺԱ.—Եթէ ոք ընդ անհաղորդին՝ թէ և ի սան՝ ազօթակից լինիցի , ի բաց որոշեացի :

ԺԲ.—Եթէ ոք ժառանգաւոր լուծելոյն (ի քահանայութենէ) ազօթակից լիցի իբրեւ քահանայի (ժառանգաւորի)՝ լուծցի :

ԺԳ.—Եթէ ժառանգաւոր ոք կամ աշխարհական որոշեալ կամ անընդունելի՝ ⁽²⁾ երթիցէ յայլ քաղաք և ընկալցին զնա առանց ընծայական թղթոց՝ որոշեացի՝ որ ընկալաւն զնա և սր ընկալեալն եղեւ , եթէ որոշեալ էր՝ յերկարեացի որոշումն իբրեւ ստոյ և պատարագի զեկեղեցի Աստուծոյ :

ԺԴ.—Եպիսկոպոսի ո՛չ է արժան թողուլ զիւր իշխանութիւն (վիճակ) և ընդ այլ ընթանալ՝ թէպէտ և ի բազմաց հարկեացի . և եթէ չիցեն պատճառք ինչ իրաւացիք առ ի բռնադատելոյ զնա առնել զայն , որպէս կարող լինին առաւել շահ ինչ օգտի մատուցանելոյ որոց անգն են՝ բանիւ երկիւղածութեան , և այն դարձեալ՝ ո՛չ յինքնէն , այլ զաստատանաւ եպիսկոպոսաց բազմաց և ազաւանօք մեծաւ :

ԸՆԴՈՒՆՈՒԱԾ ԳԻՐՔԵՐ

Ա. ՈՒՐՈՒԱԳԻԾ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ , ի սկզբանէ մինչ ցԱրշակունի հարստութիւն , գրեց՝ Տոբ. Ն. Տաղաւարեան (զրախօսականը ուրիշ տախթով մը) :

Բ. ՀԱՅՈՑ ՀԻՆ ԿՐԾՆՆԵՐԸ , Տոբ. Ն. Տաղաւարեան

Գ. ՆՈՐ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ , Արդի հայերէն լեզուի , միջին դարերաց , Ա. Բ. Տարի , պատկերազարդ .— 503 կառուներ , 460 հրահանգներ , 36 ընդերցումներ , 34 արտասանութիւններ , 29 շարադրութեան նիւթեր , հեղինակ՝ Յովհաննէս Դազանեան

Դ. ԱՏԱՆԱՅԻ ԿԵԱՆՔԸ , Յակոբ Յ. Թերգեան

(1). Հայ քաղաքներէն բնակիչս իմաստով առած է բառը եւ բոս այնմ առողջութեամբ քաղաքանաձ :

(2). Բնագիրն է չէտի ἄδεχτος .— ոմանք կ'ուզեն կարգալ չէտի δεχτος (այսինքն ընդունելի) :

ԸՆԿԵՐԱԲԱՆԱԿԱՆ

ԼԵԶՈՒԻ ՇԱՐՑԸ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԿՐՕՆԱԿԱՆ ՏԵՍԱԿԷՏՈՎ

Լեզուի հարցը ընկերա-հոգեբանական խիստ ծանրակշիռ հարցերէն մէկն է : Ան իր այժմէութեամբը լուրջ և բազմակողմանի ուսումնասիրութեան առարկայ պէտք է ըլլայ ամէն անոնց կողմէ՝ որոնք ժողովուրդներու, կամ աւելի ճիշտ՝ բազմացեղ պետութեան մը ճակատագիրը գիտակցութեամբ որոշելու և վարելու, երկրին քաղաքակրթութեան աստիճանական և կանոնական [normal] յառաջացումին ձեռնահասօրէն հսկելու և ոյժ տալու բարձր կոչումն ու ծանր պատասխանատուութիւնն ունին : Ներկայ ճամանակիս մէջ, ուր գիտութիւնն ու իմաստութիւնը՝ քննադատութեան լոյսով՝ միակ առաջնորդող ուղիղ գիծը կը պատրաստեն դէպի կեանքի լիակատար ըմբռնումը և իրականին ու ճշմարտին տիրացումը, յիշեալ հարցով զբաղելու հրամայական պարտականութիւնը կը ծանրանայ՝ բացի Աւստրիայէն՝ մանաւանդ Ռուսիոյ և վերածնած Օսմանիոյ վրայ :

Մէկ կողմէ հաւնաճողումի գաղափարը, զոր սովորաբար կ'որդեգրեն տիրապետող իշխանութիւնները՝ վերապահօրէն երկչոտ ու ալլամերժ քաղաքականութեամբ մը, և միւս կողմէ Օրթոքսիստքեան — մենք պիտի ուզէինք ըսել Սրաւակաւոքեան — հոսանքը, ինքնամատուցումի ամէնէն գուհիկ ու դատապարտելի քայլը՝ որ կրնայ ըլլալ, կը թելադրեն մեզ հնարաւոր եղածին չափ համառօտ տեսութեամբ մը պարզելու լեզուի հարցը ազգային և կրօնական տեսակէտով և բոլոր այն չարիքը՝ որ քնական և անխուսափելի հետեւանքը կըլինայ ըլլալ սխալ տուեալի մը :

×

Ինչպէս ամէն գործարանաւորութիւն՝ նոյնպէս և լեզուն իր որոշ օրէնքներն ունի : Այդ օրէնքները՝ մարդկային մեքենականութեան համապատասխան՝ օրէնքներն են

նաև հոգիին : Հետեւական և ճիշտ է ուրմն ընկերա-հոգեբանական կոչել լեզուի հարցը : Իբր այս՝ մենք պիտի փորձենք ցոյց տալ ազգային և կրօնական այն հանգամանքը՝ որ լեզուն կը բարացուցէ, կամ այն առնչութիւնը՝ զոր ունի լեզուն ազգութեան և կրօնքին հետ, և կամ վերջապէս քաղաքակրթիչի այն մեծ դերը՝ զոր լեզուն կը կատարէ իր զանազան ճիւղաւորումներու շնորհիւ : Տարակոյտ չիկայ թէ բանասիրական գիտութիւնը և ազգերու քաղաքակրթութեան պատմութիւնը՝ իմաստասիրաբար վերլուծուած՝ միակ անհրաժեշտ և գերազանցապէս արդիւնաբար միջոցներ են՝ որոնցմով կարելի է լուծել «խնդիրներու այս խնդիրը» [problème des problèmes] :

Կեանքը բնա-հոգեխօսական երեւոյթ մ'է. անոր իմաստասիրութիւնը՝ հետեւաբար՝ կ'ամբողջանայ քնախօսական և հոգեխօսական բազմախառն վիճակներու մանրակրկիտ ուսումնասիրութեամբն ու վերլուծումը : Ժողովուրդ մը կամ ցեղ մը, անհատի մը նման, ունի իր կեանքը, իր բնութիւնը և ինքնուրոյն կազմախօսութիւնը, իր մեքենական գործարանաւորութիւնը : Իր նախօսական այս առանձնայատկութիւնները արուեստական չեն, այլ ինքնաբերական և բնական արդիւնքը կլիմայի, միջավայրի, ապրելակերպի և զանազան պատահարներու, որոնք իրենց ազդակի մեծ դերը կը կատարեն նաև հոգեկան աշխարհի բոլոր իրադարձութիւններու մէջ : Արտաքին աշխարհը ինչ չափով և ինչ ուժգնութեամբ որ ներգործէ զգայարաններու վրայ, որոնց յօրինուածական ձեւն ու ընդունակութեան աստիճանն ալ համեմատաբար են վերե յիշուած ազդակներու ներգործութեան չափին ու աստիճանին, նոյն համեմատութեամբ կ'աճին ու կը զարգանան նաև հոգեկան վիճակները կամ կարողութիւնները : Լեզուն ալ, մոզովան բարամունքը մարդկային բանին [verbe] և

բանականութեան, ենթակայ է տիեզերական այդ անյիշելի օրէնքին: Ան ամէնէն աւելի զգայուն գործարանն է և անխաղախ թարգմանը զինքը կազմող ու ներշնչող բնութեան: Բնութեան ներգործական այս դերը պէտք է փնտռել ո՛չ միայն լեզուին ձայնարանական [phonétique] օրէնքին՝ այլ նաև անոր ներքին կազմութեանը մէջ:

Ըստ այսմ, առաջագրուած հարցը քննելու համար պէտք է զգանք նախ լեզուի գաղափարը երկու եղբերու վերածել:

Ա.—Լեզուն իր ներքին կազմութեանը մէջ:

Բ.—Լեզուն իր արտաքին յայտնութեանը մէջ:

Ընդհանուր սահմանումով և սովորական առումով լեզուն այն բարքառն է՝ որ մարդկային խնայքին մէջ ցոյցստծ արտաքին առարկաներու մտապատկերները յորստորումով կը քանդակուի ձայնական այն օրէնքներուն համաձայն, զորս բնութիւնը իր ազդու մի պիտիտութիւններով կ'ստեղծէ այս կամ այն հատկանիւն մէջ: Իւրաքանչիւր բառ, և նոյն իսկ իւրաքանչիւր ձայն իմաստի արտայայտութիւն մ'է, տարածման կամ յրատակ, տկար կամ զօրեղ, որ կը մարմնանայ այս կամ այն նշանին, այս կամ այն պատկերին, այս կամ այն գիրին մէջ: Հետեւաբար և իւրաքանչիւր բառ կամ խօսք պատկերներու համադրութիւն մը, իմաստներու կազմադրում մ'է՝ միակ զազափառի մը վերածուած:

Բայց լեզուն նախ քան իր մարմնառութիւնը նշանի՝ պատկերի՝ գիրի, կամ նոյն իսկ ձայնի կամ ձայներու համադրութեան մը մէջ, ունի նաև իր անմիջական և՛ այսպէս բունք՝ վերացական ծագումը: Լեզուն ո՛չ միայն գաղափարները կը յղաւորէ՝ ժառանգական [անգրգիւն] մը՝ ձայնական շուտով կամ նուազ պէսպիսութեամբ ելնէջներով, այլ նաև ու նախապէս կը լուսաւնկարէ զանոնք ի մտի ժառանգականացար: Այս տեսութեամբ լեզու և գաղափար կը նոյնանան: Լեզուին ներքին կազմութիւնը, ուրիմն, զուտ հոգեխօսական վիճակ մ'է, ուրիշ բացատրութեամբ՝ անձայն խօսքն է

այն, կամ անյօդ լեզուն, որ առաջին և էական պայմանն է գաղափարներու յօրինումը, պահպանութիւնն ու արտայայտութիւնը հնարաւորելու: Ան գաղափարները կենսաւորողն ու մշանջնաւորողն է, ենթակայացումն է առարկայական աշխարհին, հետեւաբար և ստեղծագործողը մարդկային իմացական կեանքին և հոգեխօսական բոլոր այն վիճակներուն՝ որ այդ կեանքը կ'եղանակաւորեն:

Հոգեխօսական այս բոլոր վիճակները, ուրիմն, լեզուի ներքին կազմութիւնն են. առանց ասոր չիկայ գաղափար, չիկայ զարգացում, չիկայ բարեշրջում: Ըսինք արդէն թէ լեզուին ծագումը ժամանակակից է գաղափարի կազմութեան: Երբ մարդը կը մտածէ, այսինքն իր մտքին մէջ կ'ըստեղծէ, շնորհիւ իր իմացական կարողութեան և՛ պէտք է աւելցնել՝ երեւակայութեան թախքին, արտաքին սպաւորութիւններու պատկերները, լսողական, տեսանողական, և շօշափողական, կը նշանակէ թէ կը խօսի, այսինքն կ'անդրադառնայ այդ պատկերներուն վրայ շնորհիւ հոգիի գիտակցող գործութեան: Մարդկային կազմախօսութիւնը, որ միայն ստակ է կառարելագործուելու ընդունակ լեզուի մը ստեղծագործութեան — անասունները զուրկ ըլլալով այդ բնական ընդունակութենէն — անհունապէս կ'եղանակաւորէ լեզուն: Ամէն մարդ միևնոյն կերպով չիտրի, սոսի հասարակ անդիք ճշմարտութիւն մ'է: Հետեւաբար և ամէն մարդ միևնոյն կերպով չիտրի: Լեզուական այս պէսպիսութիւնը կամ աննմանութիւնը ճակատագրական է և բնութեան նման անփոփոխելի: Լեզուական միութիւն մը, կամ համաձուլում մը հետեւաբար ևս աւելի յուսելաւոր աներականալի ցնորք մը պիտի մնայ:

Իւրաքանչիւր ժողովուրդ կամ ցեղ իր ուրոյն պատմութիւնը, ուստի և իր առանձին հոգեբանութիւնն ունի, ասի ապացուցումի անկարօտ ճշմարտութիւն մ'է: Ժողովրդային անհատականութիւն մը կայ, ուր ժողովուրդին կամ ցեղին նկարագիրը կը շնչուի և կը յայտնուի իր համագործած երփներանգութեամբ: Այդ ան-

չփոխ անհատականութեան գերազանց նը-
շանն է լեզուն, կամ, ինչպէս կ'ըսէ Սէյս
«Լեզուն ցոլքն է ընկերութեան՝ զոր կ'ըս-
տեղծէ և որմէ ստեղծուած է» (Principes
de Philologie comparée, յառաջարան Բ,
հրատարակութեան, էջ 5)։ Արդարեւ լե-
զուն ընկերաբանական պէտքի մը ծնունդն
է լոկ։ Բնութեան դէմ առանձին՝ մարդը
պէտք պիտի չունենար իր տպաւորու-
թիւնները արտայայտելու որ և է եղանա-
կով։ Ներքին խօսքը պիտի բաւականա-
նար ինքն իր վրայ անդրադառնալով։ Թէև
այս ուղիքներն յարակարծիք մ'է (paradoxe)
քանի որ մարդկային կեանքը ընկերական
կեանքի մը մէջ ունեցած է միայն իր ամ-
բողջական և կատարուն յայտնութիւնը։
Բայց մարդը մարդուն հանպէպ՝ չէր կր-
նար իր կարեկան վիճակին մէջ մնալ։

Ընկերութեան կազմութիւնը իրեն հիմ
ունի անհատական կեանքի պահպանու-
թիւնը, վառնդի անհատը արդէն իսկ կու-
րիզն է սաղազայ ընկերութեան։ Առ այս
անհրաժեշտ էին անշուշտ ոչ միայն բնա-
կան և արտաքին բոլոր այն միջոցները՝
որոնցմով պիտի մղուէր գոյութեան կռիւը,
այլ նաեւ նոյնքան բնական և ներքին
այն ընդունակութիւնը՝ որ պիտի ստեղ-
ծէր անհատներու միջեւ և անհատները
միաւորող յարաբերութեան որոշ և զօրեղ
կապ մը։ Այդ կապը պիտի ըլլար լեզուին
արտաքին յայտնութիւնը։ «Անհատը, իբրեւ
անհատ, չունի լեզու։ Լեզուն ընկերու-
թեան մը արդիւնքն ու զործին է, կը
ներկայացնէ անոր զանազան վիճակները,
կը հնազանդի անոր օրէնքներուն, կը մաս-
նակցի անոր յառաջդիմութեան։ Մասնա-
ւոր ընկերաքիւնները կը ձգտին դուրս ելլել
խրենց կողմացումէն հեզհեզ գիտար իւ-
րաշրջել (s'assimiler) փոխադարձաբան
յառաջդիմութեան շնորհիւ, նոյն բանը տեղի
կ'ունենայ փոխադարձաբար անոնց պահա-
նող գաւառաբարաւներու համար։ (նոյն
էջ 41)։

Բայց լեզուն միայն կարեկան չէ, այլ
նաեւ ներգործական։ «Լեզուն արուեստ
մ'է ինչպէս նաեւ գիտութիւն մը, պատ-
մական է և ոչ թէ ֆիզիքական. հետեւա-

բար զայն ուսումնասիրած միջոցնիս պէտք
չէ մեր տեսութեան վրայ մարդկային մտքին
կիրարկած գիտակից ճիշդ։ Անիկա պար-
զապէս գործարանական արդիւնք մը չէ,
ինչպէս չէ նոյնիսկ ընկերութիւնը, և քա-
նի որ լեզուն ցոլքն է ընկերութեան, ինչ
որ տղաւոր է ընկերութեան բարգաւաճու-
մին վրայ և որոշադրած է զայն՝ հաւա-
սարապէս ձեւացուցած ըլլալու է լեզուի՝
ալ բարգաւաճումը» (նոյն, էջ 131)։ Ըն-
կերաքեան եւ շեքսպի օրէնքները նոյնն
են։ Եւ որովհետեւ մարդկային ամէն ըն-
կերութիւն, կամ աւելի պարզ՝ ամէն ժո-
ղովուրդ կամ ցեղ ունի իր ազգային ա-
ռանձնայատկութիւնները, որոնք չեն յի-
խախտ հիմարք՝ այլ կը բարեփոխուին հի-
մին վրայ, կը զարգանան — և այդ հիմը
օրէնքն է բնութեան՝ որ անփոփոխ է
միշտ — և լեզուն այդ առանձնայատկու-
թիւններուն հետ սերտիւ կապուած է,
հետեւաբար լեզուներու ձուլումը ինքնին
ցեղերու ձուլումը պիտի նշանակէր, ինչ
որ անհնար և հակօրինական է բոլորովին։
Ցեղերու, ուստի և լեզուներու զանազա-
նակութիւնը բազմակողմանի քաղաքակը-
թութեան մը ստեղծագործութեան անհը-
րաժեշտ պայմանն է։ «Մարդկութիւնը կը
յառաջադիմէ իր ամբողջութեամբ, բայց
իր կոտորած զանազան յառաջդիմութիւն-
ները արդիւնք են աշխարհի տեսարանին
վրայ աչքազանց ցեղերու երեւումին, իւր
բաքանչիւրը իր պաշտօնով և զայն կա-
սարելու համար իր նախաաւանանուած
մեքոսով» (նոյն էջ 132)։

Թէ ազգային առանձնայատկութիւննե-
րու պահպանութիւնը աստիճանական և
կանոնական զարգացումով հանդերձ, ըն-
կերական անդիմադրելի պահանջ է՝ զայդ
ոչ ոք կրնայ ուրանալ. վառնդի քաղա-
քակրթութիւնը մարդկային բազմազան
ընդունակութիւններուն մշակումն է և ոչ
թէ կրճատումը կամ յաղաւումը՝ որ յե-
տադիմութեան նշանն է։ Միակերպութիւ-
նը մահ է. Տիեզերքի մէջ չիկայ միակեր-
պութիւն։ Լեզուներու ձուլումը, իրրեւ
միջոց սիեզերական միօրինակութիւն մը

ստեղծելու, ա՛յնքան ցնորական է՝ ո՛րքան ապօրէն: Մեծն Ազիքսանդրի հսկայ ծրագիրը, լեզուական — հեղեհականութեան — աշխարհակալութեամբ Մակեդոնական ընդարձակածաւալ և ընկրուելիչ-ծուրիչ քաղաքակրթութիւն մը ստեղծելու, առերեւոյթ և ժամանակաւոր յաջողութեամբ մը միայն կրցաւ պատկուել: Ժողովուրդները որչափ կ'ապրին՝ պիտի ապրին իրենց առանձնայատկութիւններով՝ որոնց առընթերակցական համադրութեան մէջ կը կայանայ նոյնիսկ կիանքի ներդաշնակութիւնը, իսկ այդ առանձնայատկութիւններու Գնջումը պիտի նշանակէր ժողովուրդներու մահը: Յեղական կամ ազգային լեզուին փոխանակութիւնը, ուրիմն, ուրիշ լեզուով մը, թող ներսւի մեր այս բացատրութիւնը, ղեգուսկան պրոնկրօքիւն մ'է ինքնին, քանի որ այդ միջոցով կը փորձուի իրարու անմիան նկարագիրներ բռնի ամուսնութեամբ մը միացնել իրերաւ խառնել:

Ըմբռնելու համար թէ ի՞նչ չարիք կըրնան ծնիլ լեզուական այս սարսաղութունէն, բաւական է այցելել այն երկիրները, ուր ակար ու հարստահարուած ցեղերը դատաւարաւորուած են կիրարկել ակրող ցեղին լեզուն: Կրնանք իրիւ օրինակ յառաջ բերել մասնաւորապէս Կիլիկիան Հայութիւնը, որ իր պատմութեան սկիզբէն ի վեր զանազան ակրապետող ցեղերու լեզուին՝ հետեւաբար և նկարագրին ազդեցութիւնը կրած է խորապէս. բայց ի քանի մը գիւղերէ, որոնց բնական անմասնելի դիրքը ամուր թուով մը կանգնած է այդ աւերիչ հոսանքներուն դէմ, պահելով ինքնուրոյն դաւաճարարութեան հետ առանձնայատուկ նկարագիրներ: Բայց զժրախտաբար տնտեսական անձկութիւններու պատճառով այս ազատ լեռնորդներն ալ հարկաւ դրուելով և ոչ թէ «ձգտելով»՝ ժամանակի ընթացքին մէջ «դուրս ելլել իրենց կզգիացումէն»՝ ազճատած են իրենց դաւաճաբարբար կրելով նաև դրսի այլատեաւ ազդեցութիւնը: Կիլիկիան հայութիւնն ընդհանրապէս շատ բան ժառանգած է լատինէն, յոյնէն, արաբէն և մանաւանդ

թուրքէն՝ որուն լեզուն կը խօսի մինչև այսօր: Հայ ազգային կեանքը, հայ ընտրոշ նկարագիրը խաթարուած է հոն, պահելով հանդերձ անշուշտ այն ազօտ բնագործ, որ իրիւ որքան վերջամիացութիւնը դարաւոր զգացումի մը՝ զինքը կը կապէ տակաւին հայ անունին հետ: Անհրաժեշտ է զօրացնել այդ բնագործ և վերածել զայն կրկին իր նախկին գիտակցական զգացումին. բան մը՝ որ ազգին ու պետութեան շահը միանգամայն կը պահանջէ և զոր հայ լեզուին վերաբարձումն ու զարգացումը միայն հնարաւոր կ'ընեն: Արդարեւ սահմանադրական պետութիւն մը, որպիսին է Օսմանեանը, ուր զանազան ցեղերու ազատութիւնն ու հաւատարմութիւնը, իրիւ երկրին քաղաքակրթութեան խաթիւնը, իրենց գոյութեան անկրնչելի իրաւունքը չա՛նծ են, պէտք է լրջօրէն նկատի առնէ այս պարագան, և պետութեան միութիւնը փնտռէ ոչ թէ հաւանաբար յառէս ակնհայտ և անհաւանաբար չեղ, այլ ընդհակառակը՝ ազգային անհասկանալիներու անկախօրէն մշակումին ու զօրեղացումին եւ համեայտօրէն միեւնոյն հայրենիքին շուրջ թորտնեղան մէջ: Միեւնոյն բանը Կարելի է ըսել նաև Ռուս պետութեան համար՝ որուն քաղաքական աշխարհահայեացքը շատ աւելի վտանգաւոր է թերեւս զինքը բազկացնող բազմազան սարբերուն համար: Մէկ կողմ թողով այն տրկար ցեղերը՝ որոնք իրենց ազգային անհատականութեան կամ ինքնուրոյնութեան զերեզմանը կը գտնեն հաւնաւանականութեան ցանցին մէջ, հայն ալ հոն բոլորովին գերծմնացած չէ սրոշ դրութեամբ գործող այդ ուրապետութիւնէն: Ռուսոսայ գրականութիւնը, իր բոլոր գնահատելի առաւելութիւններով, ունի իր մէջ այդ ազդեցութեան դրոշմը: Գրականութիւնը ժողովուրդի մը հոգին է, կեանքը՝ զրաւոր լեզուով մը մարմնաւորուած: Ռուսահայուն լեզուն, կեանքը, նկարագիրը, սովորութիւնները, վերջապէս ամբողջ հոգեբանութիւնը ուսու հոգեբանութեան առնուազն թեթեւ մէկ երանգով կը պարզուի ուստահայ գրականութեան մէջ: Բայց հոն

հայութեան հիմը աւելի ամուր և շեշտուած է . աւելի իւրացուցած է իր վրայ հարկաւ դրուած ազգեցութիւնը և անով իր ինքնութիւնը մշակած , քան թէ իւրացուած անկէ : Թէ ինչո՞ւ հայ լեզուն , հակառակ այսքան բազմաթիւ՝ երբեմն խիստ զօրեղ տիրապետութիւններու , որոնք զրեթէ 27-30 դարերէ ի վեր սպառնացած են հայ քաղաքակրթութեան գոյութեան , կրցած է մնալ կանգուն՝ թէև ոչ անխառն , բանասիրական գիտութիւնը և պատմութեան իմաստասիրութիւնը կուտան մեզ պատասխանը :

«Վլխման կրնայ փրկել ցեղ մը և գաւառաբարբառ մը , երկրին մէջ որ և է հիմնարկութիւն անհնար դարձնելով Եւրոպացիին համար . բայց այն ատեն գաւառաբարբառը կը պահպանուի անոր համար որ ընկերական պայմանները՝ որոնց արտայայտութիւնն է այն , կը պահպանուին հաւատարմապէս նախնական բնական վիճակին անփոփոխ մնալով : Բազաքակրթութիւնը անխուճափելիօրէն կ'սպաննէ բնական վիճակը , միայն թէ այս վերջինը չնպաստուորուի արտաքին պարագաներէ : Երկու ցեղերու գոյակցութիւնը կախում ունի իրենց ֆաղսֆալրքութեան առաւել կամ նուազ հասարակութեան : Ո՛րքան մեծ ըրրայ զանոնք անցատու միջոցը՝ ա՛յնքան մեծ կ'ըրրայ նաեւ գեղական ցեղին ընկերական եւ շեղանակական ազդեցութիւնը , միևնույն ժամանակ ի վերջոյ ստորակայ ցեղին հաւատ անհնար կ'ըրրայ սարիչ իր աւելի ֆաղսֆալրքութեան դրացիին ներկայութեան» . (Սէյս , նոյն էջ , 137) :

Անգլիացի մեծահռչակ հեղինակին մեր կողմէ ստորագծուած վերոյիշեալ առգելութեն մէջ կը խտանայ ահա հայ ժողովուրդի լեզուին և ընկերական կեանքին առաւել կամ նուազ կերպափոխութեամբ մը պահպանման գաղտնիքը : Օսմանեան երկրին մէջ ցեղերու գոյակցութեան պէտքը անուրանալի է , այդ գոյակցութիւնը եւրաշխաւորելու համար՝ իւրաքանչիւր Օսմանցի ստոր պարտաւոր է իր գոյակից տարրին համահաւասար ոյժով և միջոցներով մշակել իր քաղաքակրթութեան գործը : Մին զմիւսը ընկուզելու ճիգերը կամ

փորձերը վտանգաւոր են բացարձակապէս այս հայրենիքի ամբողջական միութեան համար : Բայ աստի բանասիրական և միանգամայն պատմական ճշմարտութիւն մ'է թէ լեզուներ կան , որոնք հակառակ ամէն ճիգերու պահպանելու համար անոնց գոյութիւնը , դատապարտուած են մեռնելու , այսպէս եղած է Դաւմանիոյ (Աւստրալիոյ հարաւակողմը) լեզուն՝ զայն խօսող ժողովուրդին հետ . իսկ լեզուներ ալ կան՝ որոնք սպրկուլու սահմանուած են ի գլին ամէն զոհողութիւններու . Հայ լեզուն ասոր պերճ օրինակն է , ժամանակակիցը եգիպտական և ասուրական աշխարհակալ լեզուներուն , որոնցմով մեհեաններն ու ժայերը միայն կը խօսին այսօր : Հայ լեզուն , ուրեմն , իր գոյակցութեան արդար և անբաժանարար իրաւունքը կը պահանջէ միայն Ռուսիոյ և վերածնած Օսմանիոյ Պետութիւններէն պետական և ալ օսմանցի զանազան լեզուներուն առնթիւ : Հոյը ունի և պէտք է ունենայ քաղաքակրթութիւն իր առանձին դերը՝ ի սպաս բերուած մեծ և մի Հայրենիքի փրկութեան և բարձրացման գործին , որուն շուրջը պիտի բուրդուին նաեւ բոլոր միւս օսմանցի ցեղերը իրենց առանձին քաղաքակրթութիւններով : Օսմանիայի փրկութիւնը եւ փառաւոր ապագան օսմանցի բազմացեղ մեծ Զանգուածին զանազան ֆաղսֆալրքութեաններուն հաւերաչի՝ աննախանձ , անկեղծ եւ հաւատարմ գործակցութեան կախում ունի բացարձակապէս : Առանց այս ԱՆՁՈՒԼԵԼԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ Սահմանադրութիւնը պիտի դատապարտուի մնալու իրեն մեռած ատու մը :

Թիւրքմայութիւններու տեղի չտալու համար փութանք ըսել թէ մեր նիւթէն դուրս է խօսիլ ազգային լեզունէն զատ՝ պետական կամ ուրիշ լեզուներու ուսուցման պէտքին և դերին վրայ :

Փոքր ի շատէ լուսարանիլէ յետոյ լեզուի հարցը ազգային տեսակէտով , հարեւանցի ակնարկ մ'ալ նեւտնք նոյն հարցին վրայ կրօնական տեսակէտով :

Ըսուեցաւ արդէն թէ՝ լեզուն ցոլքն է ընկերութեան և թէ՝ լեզուական հարցը

ընկերա-հոգեբանական հարց մ'է։ Սխա-
լած չենք ըլլար եթէ նոյն սահմանումը
տանք նաև կրօնքին, որ իբր ընա-հոգե-
խօսական գերազանց երեւոյթ մը, ինչպէս
այլուր փաստած ենք, լեզուին հետ ծագ-
ման միեւնոյն աղբիւրն ունի։ «Կրօնքը
ընկերութեան ամէնէն իմացական, ամէնէն
խորին, հետեւաբար և ամէնէն տեւական
արտայայտութիւնն է, և եթէ մենք պար-
տինք լեզուին մէջ փնտռել ընկերութեան
պատմութիւնը՝ ա'լ աւելի պարտաւոր ենք
անոր մէջ փնտռել կրօնքի պատմութիւնը»։
(Սէյս, նոյն էջ 223)։ Կրօնքներու վերլու-
ծումը անհնար է առանց լեզուներու վեր-
լուծումին, վասնզի առաջիններուն հիմը
լեզուներուն մէջն է, անոնց բառերուն
մէջ՝ որոնք դարերու հոլովումներով՝ խոր-
հրդաւոր և խորհրդապաշտիկ հանգամանքով
մը կ'ընդելուզեն կրօնքներու նախնական
և ամենապարզ նշանակութիւնն ու իմաս-
տը։ Եթէ այսպէս լեզու և կրօնք՝ իբրև իմաց-
ական արտայայտութիւն՝ կը զուգակցին ի-
րարու, կ'ապրին իրարմով և կը բացա-
րեն զիրար, կը նշանակէ թէ անոնց հարցն
ալ մասնաւոր կը նոյնանայ։ Կրօնքն ալ լե-
զուին նման կարեկան է և ներգործական։
Իր ներգործական ոյժը սակայն իրեն դա-
ւանող կամ զինքը ծնող ժողովուրդին
լեզուին և քաղաքակրթութեան զօրու-
թեան մէջ է։ Երբ ունի այդ ոյժը՝ անխու-
տափելի է որ զայն հիւրընկալող ժողո-
վուրդներն ալ տուժն նաև թէ՛ իրենց
լեզուով և թէ՛ իրենց քաղաքակրթու-
թեամբ։ Հայ ժողովուրդը իր մէջ ցոյց
կուտայ ասոր անհերքելի ապացոյցը՝ քրիս-
տոնէութեան Հայաստանի մէջ մուտքէն
առաջ և վերջ։ Աղեքսանդր Մակեդոնացիի
դէպի Ասիա կատարած արշաւանքէն առաջ
յուստ-պարսկական պայքարը սկսած էր
արդէն։ Երկու քաղաքակրթութիւններու՝
ասիականութեան և եւրոպականութեան
կռիւն էր այդ, որոնց մէջ կը ստատանէր
հայկական փոքրիկ քաղաքակրթութիւնը։
«Մենք ասիականութեան զինուոր էինք,
կ'ըսէ Լէօ իր «Ս. Մարտոյ» քննադատական
մեծարժէք գործին մէջ (էջ 52-53)։ Սա
ընական էր, շատ հասկանալի։ Մի համե-

մեմատարար թոյլ ու փոքրիկ ազգ, մենք,
ընտելւելով Ասիայում, ենթարկուցինք
այդ տեղի ոգուն, որ, ի դէպ ասած,
ընական է զարդացման ստորին աստիճան-
ների վրայ կանգնած ազգերի մէջ։ Հայե-
րն էլ Քսերքսի բանակում գնացել էին
Յունաստան՝ քաղաքակրթութիւնը ջնջե-
լու, և Հերոդոտը նեարագրում է մեր հա-
զուսան անգամ։ Կրթութեամբ, բնաւո-
րութեամբ, ձգտումներով մենք այն էինք,
ինչ մեզանից չառ մեծ, մեզ վրայ սիրող
ազգն էր։ Իրանը մեր մէջ էր ապրում (մենք
կ'ստորագծենք, Գ. Վ.)։ Պահպանելով մեր
լեզուն, ազգային անհատականութեան այս
առաջնակարգ ոյժը, պահպանելով մեր ա-
ւանդական առանձին, ցեղային յատկու-
թիւնները, մենք մեր սեփական տեղն էինք
գրաւում ազգերի այն խառնարանին մէջ՝
որ Իրանի պետութիւն էր կոչվում։ Բայց
միեւնոյն ժամանակ մենք ձգտում էինք
դէպի իրանականութիւնը, ներս էինք ծծում
իրանական ազդեցութիւնը, կուլտուրական
(= մշակական), հասարակական և պետա-
կան հասկացողութիւնները)։

Իրանական ազդեցութիւնը միայն մշա-
կական, հասարակական և պետական ըմ-
բռնումներու մէջ չէր ամփոփուէր, հայ
սարրը այդ ազդեցութեան սակ իւրացու-
ցած էր նաև Իրանի կրօնքն ու լեզուն։
Իր աստուածները Իրանի աստուածներն
էին մեծ մասամբ և իր շրջապատուները
հայկական բնորոշ հանգամանք մը չունէին
ընդհանրապէս։ Արդարև Իրանն էր որ մեր
մէջ կ'ապրէր։ Հայ գեղջկուհին իր մայրե-
նի լեզուն ձգած՝ պարսիկ լեզուն կը խօ-
սէր, այն թուականին երբ Քսենոփոն Հայ-
աստանէն կ'անցնէր։ Կրօնք և լեզու ձեռք
ձեռքի տուած կ'առաջնորդէին Հայաստանը
Իրանականութեան ծոցը, ուր ազգերու
անկախութիւնը գոյութեան իրաւունք
չունէր։

Քրիստոնէութիւնը պաշտօնապարտելով
հայ-պարսիկ հեթանոսութեան վրայ՝ Հա-
յաստան չուտով չկրցաւ թօթափել իր վը-
րայէն հնութեան լուծը։ Գրիգորի ձեռքով
կատարուած լուսաւորութեան գործն ան-
գամ վերջնական յաղթանակը չէր հեթանո-

սուբյեկտային վրայ: Փ. Բիւզանդ մեզ կ'ըսէ թէ Վլդանէսի ժամանակ՝ միայն Տարօնի մէջ կը գտնուէր ահապին խուժան մը «Իսրէ հազարք երկու», «որք զհոռիքիւն կը-
նապաշտութեան հեթանոսութեան զեղն յո-
վորութիւն միկնէր ցայնժառ եւս ունիկն
գաղտնի» (Դպր. Գ. գլ. 4). և թէ Ներսէ-
սի մահէն վերջ (373) «Բազում գաւառք
հայոց և բազում մարդիկ ի հեթանոսիս զիւ-
սապաշտութեան դարձան, և ընդ բազում
տեղիս Հայոց կուռս կանգնեցին» (Դպր. Ե.
գլ. 1ա): Մետրոպ և Սահակ Պարթև
չառ լաւ ըմբռնեցին պարսկականութեան,
կամ Լէօն բաւով՝ «ստիականութեան» վը-
տանդը, և մեծ մոռհոգութեամբ սկսան
դիտել պարսկական դէնի հետ՝ պարսկա-
կան լեզուին տիրապետութիւնը ի վնաս
քրիստոնէական կրօնքին և հայկական լե-
զուին. թէև եկեղեցական լեզուն բլար
յունականը կամ ասորականը, որոնք հա-
ւասարապէս անկարող էին մշակելու հայ-
կական-ազգային իսկական ոգին: Արեւել-
քէն կուգար լեզու մը և կրօնք մը, որոնց
երկուքին ալ ընտել էր հայ ժողովուրդը.
իսկ արեւմուտքէն նոյնպէս լեզու մը և կր-
օնք մը, որոնց երկուքին ալ նոր պիտի
ընտելանար հայ միտքը: Այս երկու ընտա-
նութիւններն ալ չէին կրնար փրկել հայուն
ճակատագիրը: Դժուար չէր ըմբռնել թէ
ո՛չ հին արեւելքը և ո՛չ ալ նոր արեւմուտ-
քը բաւական չէին տալու հայուն այն՝ որ
անհրաժեշտ էր նոր կրօնքը անուշամեղ
ազգային ինքնատիպ կեանքի մը մէջ: Ահա
այս անհնարութիւնը Մետրոպը մղէց այն
մեծ գործին՝ որ հայկական լեզուի չքել
վերածնունդը իրագործեց և գրական Ու-
կեղարով մը հայկական ուղղային և կրօ-
նական ինքնուրոյնութիւնը երաշխաւորեց:
Հետաքրքրական է նաեւ այն պարագան որ
սակաւին երկար ժամանակներ շարունակ-
ուեցան պարսկա-յունական պայքարը եր-
կու տիրապետելու ձգտող պետութիւն-
ներու մէջ և այդ պայքարին հետ նաեւ
պարսկա-յունական հոտանք մը հայ հողին
վրայ: Կոտանք՝ որ Արշակունիաց թագա-
ւորութեան անկումը փութացուց: Յազ-
թութիւնը սակայն Հայունն էր, որ հա-

կառակ քաղաքական և տնտեսական ա-
հաւոր աւերներու, հակառակ ջլատիչ բիրտ
ու զաւանային թշնամի սյգերու, արիւ-
նաներկ դարերու ընդմէջէն անցնելով դիւ-
ցազնաբար՝ կրցաւ պահել իր ինքնութիւնը,
իր գոյութիւնը, չնորհել իր զօրեղ ու ան-
ընկճելի հոգեբանութեան՝ որուն արտա-
յայտութիւնն են իր ԼԵԶՈՒՆ ու ԿՐԾՆԲԸ:

Հարկ կ'այ ալ աւելի խօսիլ և պարզել
թէ ո՛րքան անխորհուրդ պիտի բլար որ
և է քայլ՝ որ պիտի առաջնորդէր Հայ
սարբը դէպի ուրացում ազգայինին, բլար
այն լեզուական կամ կրօնական: Թէ կրօն-
քի, կամ կրօնքի դաւանանքներու փոխա-
նակութիւնը ուրիշ եկեղեցիի մը կրօնական
դաւանանքներով կրնայ սարսկել և վնա-
սել նաեւ ազգայնական գոյութեան՝ կր-
օնայինք ապացուցել այն տիւր իրողու-
թիւններով՝ որոնք կը տեսնուին յարան-
ուանութիւններու կեանքին մէջ ընդհան-
րապէս, յարգելով հանդերձ այն բացա-
ռութիւնները՝ որոնք հայկական ազգային
կրօնի կռիւնը յարգող, հետեւաբար եւ
հայկական ազգային լեզուի յարգ մշակումին
աշխատող եղած են միշտ: Այսպիսի ձեռնար-
կութիւն մը սակայն հեռուները պիտի առ-
նէր զմեզ, ինչ որ մեր նպատակէն դուրս
է և պարբերականի մը մէջ խտացնել ան-
հնար:

Կ'եզրակացնենք. Օսմանիոյ շահը կը պա-
հանջէ մերձեց որեւէ համաձայնութիւն
գաղտնիք եւ այդպիսի հոռութիւն: Մաս-
նաւորելով ՀԱՅԸ ՀԱՅ ՊԵՏԲ Է ՄԵԱՅ
ԻՐ ԼԵԶՈՒՆՈՎ ԵՒ ԿՐԾՆԲՈՎ և Օտանցի
իր փաղափսխան եւ փաղափսխական բոլոր
իրաւունքներով Օտանցեան հայրենիքի գա-
ղազման եւ յառաջդիմութեան գործին նու-
րութեամբ, իր ԼԵԶՈՒՆ ՈՒ ԿՐԾՆԲԸ քերելու
ի սարս Օտանցեան փառասան՝ փաղափ-
սութեան մը սեղծագործութեան, ինչպէս
Օտանցեան միւս գեղերը՝ նոյն այս մեծ եւ
անկեղծ ՄԿԶՐՈՒՆԲՈՎ:

ԳԱՐԵԳԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ

ԿՐՕՆԱ-ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՀԱՒԱՏՔԸ

ՊԵՍԱՆՔԻ ԱՆՀՐԱՍԵՏՏ ՊԱՅՄԱՆ

Հաւատքի վրայ կ'ուզեմ խօսիլ քեզի, Հա՛յ ժողովուրդ:

Այն անկողնի վրայ, որ լեռները կրնայ տեղափոխել՝ Մեծ Վարդապետին պատգամին համոծայն, որ հիւանդին բոյժ կուտայ, տկարին ոյժ, որ անհրաժեշտ է աշխարհային ու երկնքի կեանքին մէջ ճակատաբայ բարձրագլուխ երեւոյթը, կեանքին մէջ յաջողելու համար:

Ի՞նչ է սակայն հաւատքը, և ո՞ւրկէ կը ստանայ այդ հրաշալի ուժը: Հաւատքը, ինչպէս կը բացատրեն բառարանները, համոզում մ'է, իրողութեան մը ստուգութեան վրայ, անձի մը ճշմարտախօսութեան կամ կրօնական հաւատալիքներու ճշմարտութեան վրայ: Հաւատքը, ուրիմն որ պէտքի իր մէջ բովանդակէ բազմապիսի հրաշալի ուժեր, պէտք է կառարեալ ըլլայ գիտակցօրէն եղած ուսումնասիրութեան մը, խորունկ համոզումի մը սրբիւնքը, ըլլայ այնքան զօրաւոր որ կարենայ դիմադրել ամէն փառսի, ամէն պատճառաբանութեան, արմատացած գանուի մարդուն հոգիին խորը:

Այս բացատրութիւնէն պարզօրէն կը հասկցուի թէ մի միայն կրօնքի տեսակէտէն չէ որ կ'ուզենք խօսիլ հաւատքի վրայ: Աշխարհային գործերու, մեր ամենօրեայ կեանքին գիմայեղումներուն մէջ ալ հակառակ նշանակութիւն մը ունի հաւատքը, հաստատուն, անդրդուելի համոզում մը, որ մեծ դեր կը կատարէ մարդոց անհատական, ընտանեկան, ընկերային, քաղաքական կեանքին մէջ, և . . . յաւիտենական կեանքին համեմատ համար:

Դիտեցէ՛ք, ուսումնասիրեցէ՛ք, հետազօտեցէ՛ք մանրակրկիտ խղճմտութեամբ ինչ որ կ'անցնի կը դառնայ ձեր անձին մէջ ու շուրջը, քննեցէ՛ք ձեր ծանօթներուն անհատական կեանքը, ընտանեկան կեանքը, հանրային կեանքը, ու համոզում պիտի գոյացնէք թէ բոլոր անոնք որ յաջողած են, որ երջանիկ են, որ զոհ են իրենց վիճակէն, հաւատացեալներ են ամէնքն ալ «հաւատացեալներ» բառին լայնագոյն ուսումով:

Հաւատացեալ մ'է համեստ խանութպանը, որ նոյնքան համեստ զբամազլուխով կրպակ մ'է բացեր, այն հաստատուն համոզումով որ առիկա պիտի կրնայ պարկեշտօրէն ապրեցնել զինքն և իր ընտանիքը: Ո՛րքան խորունկ ըլլայ այդ համոզումն իր մէջ, ո՛րքան հաստատուն՝ իր հաւատքը, այնքան աւելի ուժ և կամեցողութիւն պիտի դնէ այդ գործին յաջողութեան պայմաններն ուսումնասիրելու, և ըստ այնմ ուղղելու համար իր բոլոր ջանքը, որով միայն պիտի կրնայ նոյն համեստ կրպակը լայնցնելու, ընդարձակելու, ճիւղացնելու, և օրին մէկն այդ սառնաւորն ընդարձակ սահման մը տալու համար: Վերցուր այդ համոզումը, ու պիտի ջլատուի իր կամեցողութիւնը, պիտի ոչնչանայ այն մեծ ուժը որ պիտի մղէր զինքն այդ գործը ի գլուխ հանելու համար անհրաժեշտ ջանքին:

Դիտեցէ՛ք սա դարբինը, ո՛րքան դժնդակ է իր աշխատութիւնը: Երկաթի խոշոր կտորներ՝ հոսցն մէջ ապուշէկ գոյն մ'առնելէ ետքը, կը բերուին խոշոր սալին վրայ ուր վիթխարի մուրճերու ստակ կը դարձնուին, կը ձեւափոխուին՝ կայծերու հեղեղ մը տեղացնելով շուրջանուկի: Մուրճի սխալ շարժում մը՝ իր կամ միւս աշխատողներուն կողմէ, ամէն վայրկեան կրնայ վտանգի ենթարկել թանկագին կեանքեր: Մուրճին ելեւէջ կ'ընեն, չնչառութիւնները կ'երազանան, անընդհատ հեւքի մը կը փոխուին, քրտինքի խոշոր կայլակներ կ'ողողեն բոլոր աշխատողներուն ճակատը, որոնց սոճքերն աւելի՛ կրտկոտ են քան դարձնողարանի վտարանն որ կը բացաւաւ հակառակ փքոցին մղու մին սակ: Կեանքը, ոգեւորութիւնը և կ'տիրէ աշխատանոցին մէջ, ուր կը կառարուի աշխատութիւններու ամէնէն դժնդակը, անհանդուրժելին: Բայց հակառակ տոտր, գոհունակ, ուրախ արտայայտութիւն մը կը կարգացուի դէմքերու վրայ, որովհետեւ անոնք զօրացած են ներ-

քին, հոգեկան անդինադրելի ուժով մը, այն հաւատքովը՝ թէ օրհնեալ աշխատութեան արդիւնքովը երջանիկ կեանք մը կ'ապահովեն իրենց և իրենց զաւակներուն։ Վերջուր իրենցմէ այդ համոզումը, և մուրճը վեր առնելու կամքը, նոյն իսկ կարողութիւնը պիտի պակսի անոնցմէ։

Վայրկեան մը հեռանանք մայրաքաղաքի ճշդուած, ապականուած մթնոլորտէն, երթանք դաշտերը, լայն, աղատ, մաքուր օդ չնչկու լիւթոք։ Այն տեղ բնութիւնը մեծ դատարարակը՝ կարեւոր իրողութիւններ պիտի ցուցադրէ մեզի, խորունկ ճշմարտութիւններ պիտի սորվեցնէ, եթէ տեսնելու աչք, և լսելու ականջ ունենանք։ Այդ աչքին ու ականջին չգոյութեան, և մտքի սնուցողութեան առջև իսկ, բան մը պիտի ցցուի սակայն մեր առջև։ — Երկրագործն է ան, աշխատութեան արպարը, հաւատքի մարմնացումը։ Արեւուն այրող ճառագայթներուն տակ, կը բրէ, կը պեղէ, կը հերկէ, լակոսներ կը բանայ, եղանակին համեմատ գործածելով մաճն ու արօրը, ըրիչը կամ մանգաղը, արգասաբեր հողին վստահելով ցորենի հասիկները որ կ'ուռճանան, կը բեղմնաւորին, բազմապատիկ վարձատրելով անոր հեքոտ աշխատութիւնը, անոր հաւատքը՝ մանաւանդ՝ այդ աշխատութեան ստոյգ արդիւնաւորման վրայ։ Եւ անիկա՝ հողագործը՝ ա'յնքան աւելի եռանդով պիտի նետուի այդ օրհնեալ աշխատութեան մէջ, ո'րքան աւելի վստահ ըլլայ թէ անոր արդիւնքը լիովին ինքը պիտի վայլէ, տառանորդի արդար բաժին մը միայն հանելով պետութեան, և անօրէն միջոցաւ և անոր արւանակները չպիտի խլեն ձեռքէն ինչ որ միմիայն իր քրտինքին պտղաբերումն էր։ Ինչու ինկած է երկրագործութիւնը թուրքիոյ մէջ. հաւա'տքն է որ կը պակսի գիւղացիին՝ թէ ըստերաւ Բնութեան լիառատ պարգեւած բարեքներն իրեն պիտի թողուին։

Մտնենք սա վարժարանին մէջ։ Լուռ է սրահը. ուշադիր աշակերտներու երկիւղած յարգանքով չըջապատուած՝ կ'սօսի դաստիարակը, աղոց պարտականութիւններուն

վրայ դէպ իրենց անձը, դէպ իրենց ընտանիքը, ազգը, Եկեղեցին, Հայրենիքը, դէպ ընդհանուր մարդկութիւնը։ Ոգեւորուած, համոզուած շեշտ մ'ունին ուսուցչին խօսքերը։ Յայտնի կ'երեւայ թէ հաւատացեալ մ'է ինքը ճշմարտութեանն այն բոլոր բաներուն որոնց վրայ կ'սօսի, հաւատացեալ մ'է՝ նաեւ իր անձնական կարողութեան, իր ազգեցութեան վրայ, հաւատացեալ մ'է մա'նաւանդ՝ այն վսեմ դերին վրայ զոր կոչուած է կատարել վարժապետը, — ցարդ արհամարուած և անտեսուած — ուսանողներու մաքին ու սրտին կրթութեան մէջ հաւատարապէս հաւատացեալ մը՝ թէ ան՝ վարժապետը՝ միայն կրնայ փրկել ազգը՝ նոր սերունդին հոգիին մէջ ճառագայթելով լոյսին — գիտութեան ու կրօնքի լոյսին — կենսատու ցոլքը։ Այս հաւատքով զօրացած, այս ներքին հզօր համոզումէն մղուած, իր խօսքերը, իր բառերը, իր շեշտերը կը ցնցեն կ'ելեքորականացնեն, կ'ողեւորին մատաղատի ունկնդիրները՝ զգացումներու ամէնէն ազնիւովը։ — սէրը՝ դիտութեան ու կրօնքին, անձնութիւնն առ մարդկային ընկերութիւնն։ Աւա'ղ, ո'րքան սակաւաթիւ են այս հաւատքով զօրացած ուսուցիչները մեր մէջ, ու ո'րքան ինկած՝ մեր վարժարանները։

Եւ հաւատքը կ'ըսուէ՝։ Յիսուսի խօսքը՝ «հաւատա՛ և պիտի բժշկուիս և հաւատա՛ և պիտի տեսնես Աստուծոյ փառքը», գիտական ճշմարտութեանց կարգը դասուած է քան դար ետքը։ Կը յիշեմ սարիւններ առաջ Ֆրանսոյի մեծ գիտնականի մը՝ Բրօֆ. Շառքօի հոյակապ մէկ ուսումնասիրութիւնը, լոնտոնեան Հանդէսի մը՝ New Reviewի մէջ, [faith-healing = La foi qui guérit = Հաւատքն որ կը բուժէ] խորագրով, որուն մէջ նշանաւոր բրօֆէսէօրը կ'ուսումնասիրէր հոգեկան այդ մեծ ուժին՝ Հաւատքին հզօր ազգեցութիւնը, գոնազան հիւանդութիւններու արմատական բուժումին մէջ։ Եթէ Յիսուս իր Աստուածային կարողութիւնը մեղմման սկսար միաքերու յայտնելու համար՝ կ'ընէր իր հրաշալի բուժումները, եթէ ի-

րեն հետևողներն Անոր անուհով կարող
կ'ըլլային նոյնքան հրաշալի բուժումներ
ընել, և եթէ Սուրբերու մասունքներն և
ուխտասեղինները ժամադրաւայր դարձած
են ամէն կարգի արտաժէտներու որ իրենց
բոյժն և սփոփանքը կը գտնեն նոյն սրբա-
վայրերուն մէջ, անուրանալի է որ ենթա-
կային կատարեալ հաւատքն հիմնական դեր
մ'ունենցած է միշտ այդ հրաշալի բուժում-
ներուն մէջ, խորո՛ւնկ հաւատքը որ ամէն
ինչ է ժողովրդային խաւերու, Աստուծոյ
սիրովը զօրացած պարզ հոգիներու մէջ:

Ու ս'ըքան զօրաւոր եղած է հաւատքը
ճշմարիտ յեղափոխականներուն քով, որ
արիւնի մկրտութիւնովը մկրտուեցան, ու
զոհուեցան ազգին փրկութեան սուրբ սե-
ղանին վրայ: Բռնապետութեան կուռ չղ-
թաներով պրկուած, ամբողջ ժողովուրդ-
մը կը տազնապէր, կը հեկեկէր յուսահատ
կը տուայաէր արտամ վհատութեամբ մը:
Արդարութեան վերջնական յաղթանակին
վրայ աննկուն հաւատքն էր որ այդ վը-
հատած ժողովուրդէն յառաջ բերաւ Հըր-
այրներ ու ժիրայրներ, Այբբեր Սերաբներ
և Անդրանիկներ, որ ափ մը անձնուէր ըն-
կերներով չըջապատուած տարիներ ու սա-
րիներ ո'րքան անհաւասար նոյնքան յա-
ջող պայքար մը մղեցին Բռնապետութեան
բիրտ ուժին դէմ, մինչև որ իրենց զօրաւոր
հաւատքն ու ազատասէր ոգին ծաւալե-
ցաւ, տարածուեցաւ ամէնէն անյուսալի
չըջանալիներու՝ նոյնինքն Բռնապետութեան
ձեռքը գործիք դարձող բանակին մէջ, որ
ճգնաժամային օրուան մը մէջ տապալեց,
փշուր փշուր բրաւ կուէ սաքերով հսկայ
արձանը, ու բերաւ մեղի ազատութեան
արշալոյսը, հոգ չէ թէ ան մթաղեամբ գլխ-
նուի մերթ մուսլ տմպերով: (Ո՛հ, չենք
կրնար մոռնալ Ատանան): Թո՛ղ չըլլար
այդ Հաւատքը՝ զրկուած իրաւունքին
վերջնական յաղթանակին վրայ, ու սա-
կաւին երկար տարիներ պիտի հեծէինք
Ապա-իւլ-Համիտի արիւնոտ լուծին սաւկ:

Հաւատքն է ուրեմն զապանակն ամէն
ճիգի և աշխատութեան, ներքին ուժն որ
մարդս կ'մղէ ամէնէն վսեմ անձնուիրու-
թիւններուն, որ զոհողութեան կուտայ ի-

տէալ գեղեցկութեան մը հրապոյրը, որ
անուշ վայելք մը կը դարձնէ տառապանքը,
որ Պէռնար Բալիսիները, Տընի Բարէնները
կարող կ'ընէ հեղինակ դառնալու գիրինք
անմահացնող հաղարաւոր գիւտերու, ի
գին բազմադիմի զոհաբերութեանց և նոյն
խոկ իրենց կեանքին:

Ու երբ անիկայ անհրաժեշտ կը դառ-
նայ աշխարհային կեանքի ամէն դիմայե-
ղութեանց մէջ, գործի աշխարհին թէ ի-
մացական տապալէզին վրայ, յեղափոխա-
կան-ընկերավարական կեանքին թէ գիտուն-
ներու, բանաստեղծներու բարձր ոլորտին
մէջ, ո'րքան ստիպողական, անխուսա-
փելի է անոր գոյութիւնը՝ հոգեւոր, բա-
րոյական կեանքին մէջ, որ Հաւատքի վրայ
հիմնուած է գերազանցօրէն:

Ո՛հ, աներեւակայելի է տազնապն անոր
որ չի՛ հաւատար գերագոյն զօրութեան
մը, Իմացականութեան մը, Աստուծոյ մը,
յուսահատական՝ վիճակն անոր որուն չոր
սիրտը զուրկ է խորունկ հաւատքի մ'ըն-
ձեռած միսթարութենէն, որ պարզ տա-
րակոյսով մը հերքուած կը կարծէ յայտ-
նուած կրօնքին աստուածային ճշմարտու-
թիւնները. անհանդուրժելի՝ կոյուրթիւնն
այն բոլոր վշտակեալներուն, տառապող-
ներուն, զրկուածներուն, որ իրենց հոգիի
ալքերուն մէջ չեն գտներ Հաւատքի սփո-
փանքը, սիրոյ Աստուծոյն անուշ խօսքե-
րուն գերագոյն քաջալերութիւնը, որ չու-
նին իրենց սրտին մէջ յոյսն ու սէրը որ
հաւատքէն կը բղխին. ահաւոր՝ վիճակն
այն սկեպտիկ զիտողներուն որ ընկերային
կեանքի անհաւասարութիւններուն, աշ-
խարհի անիրաւութիւններուն կը նային
իւրեւ արգելւիքը աւելի հսկայ անիրաւու-
թեան մը՝ Դիպուածին:

Ուրկէ եկած ենք, ո՛ւր կ'երթանք,
ինչ է շարժառիթը, նպատակն ու վախճա-
նը անիղերքի կաղմաւորութեան: Գիտու-
թիւնն իր բոլոր հրաշալի գիւտերով, ու
մարդկութեան ընծայած բազմադիմի օ-
գուններով հանդերձ, տակաւին չկրցաւ
գտնել պատասխանն այս հարցումներուն:
Պատճառին պատճառը փնտռելու հետա-
քրքրութիւնը մղեց մարդկութիւնը խո-

բունկ ուսումնասիրութիւններու, որ սա-
կայն յանգեցան ու միշտ պիտի յանգին
մեծ Անծանօթի մը, հուսկ սահմանի մը
որմէ անպին անհնար կը դառնայ անցնիլ
ամէնէն յամառ մաքին, ամէնէն սուր ի-
մացականութեան: «There are more
things in heavene and earth than are
drains in your's philosophy. Շատ աւելի
բաներ կան երկնքի մէջ և երկրի վրայ,
որքան երազներ չիկան քու փիլիսոփայու-
թեանդ մէջ»: Շէքսպիրինն է այս խօսքը,
որուն ճշտութիւնը կը հաստատուի դարեւ-
րու փորձառութեամբ: Ինչ որ գիտնապէս
ճշտուած, փորձուած, քննուած, ստուգ-
ուած է բնութեան գաղանիքներէն, հաղիւ-
հիւլէ մըն է անծանօթի անհունութիւններու
ըով: Ուրանալ անոր գոյութիւնը տիեզե-
ական գաղանիքներու, տարակուսիլ ան-
հունօրէն բարձր, անսահման, անծանօթ
զօրութեան մը գոյութեան վրայ, պիտի
ըլլար յայտարար նշան մը ծագելի տղի-
սութեան, յոր և նման մանկունակ միա-
քի տէր գիւղացիի մը վճռական, յամառ
զազափարին, որով տիեզերքին սահման
կ'ճանչնայ իր գիւղական շրջանակը, և եր-
կինք իրեն համար կը նշանակէ զլսուն
վերե երեւցող կապոյտ հորիզոնը միայն:
Ինչ գեղեցկութիւններ կան սակայն այդ
անծուկ շրջանակէն դուրս, և ինչ անհու-
նութիւններ՝ աստղերով ծածկուած այդ
կապոյտ պատսառի երեւոյթին տակ:

Խոշոր սիւալ մը պիտի ըլլար հերքել
գոյութիւնն այն ամէն բաներուն որ մեր
չգայարաններուն տակ չեն իյնար, զորս
չենք չօշտիկ, չենք տեսներ, չենք լսեր,
կամ որոնց մեր խիղճը չի հասնիր, որոնք
մեր մտքի հասողութիւնէն վեր կը մնան:
Ատոնցմէ վեր կայ անիմանալին, անբժշու-
նելին, ամենագէտը, ամենագորը, որուն
մէկ կենդանի շունչն յառաջ կը բերէ մեծ
հանճարները, որուն հոգիին մէկ մասնիկը,
որուն լոյսի մէկ նշոյցը, մէկ կայծր բա-
ւական կ'ըլլայ աշխարհի ամէնէն աննշան
ձկնորսներն ու աղէտները գարձուելու ճար-
տարախօս լեզուներ, ներշնչուած առաք-
եալներ, կայծակնամտքուր մարգարէներ,
որոնց գործերը դարերու ընթացքին մէջ
միշտ վեր միշտ բարձր կը մնան աշխարհի
բոլոր գրադէաններու, փիլիսոփաներու, բա-
նաստեղծներու գլուխ գործոյններէն:

Ո՛հ, հաւատանք Անոր, սիրոյ, անձնա-
զոհութեան Աստուծոյն, որ կը յայտնուի
ամէն բանի մէջ, տիեզերքի մեծ վայելչու-

թեան և երկրաչափական կանոնաւորու-
թեանը մէջ, ծառին, ծաղիկին, անշունչ
տերեւին, և մասնաւորապէս իր գլուխ գոր-
ծոյցին՝ մարդուն մէջ: Քննենք ուսումնաս-
նիրենք բնութիւնն, իր տարրերն և օրէնք-
ները, և զԱստուած պիտի գտնենք անոնց
մէջ. քննենք ինքզինքնիս, մեր մարմնին
կազմախօսութիւնը, մեր ջղային դրու-
թիւնը, մեր հոգին և իր ձգտումնե-
րը, և սաստուածային իմաստութիւնը պի-
տի նշմարենք մեր կարճատես աչքե-
րով: Եւ եթէ այդ քննութիւնը կա-
տարելու համար պէտք եղած յստակա-
տեսութիւնը չունինք, կարգանք գտնէ
իւ Ս. Գիրքը, իւ Աւետարանը, սի-
րոյ կրօնքին այդ գերագոյն, խաշալ ներ-
շնչարանը, ու պիտի համոզուինք թէ մարդ-
կային հանճարէն վեր, գերբնական կարո-
ղութիւն մը ներշնչած է անար ոսկի խօս-
քերը: Այդ ընթերցումը համոզում պիտի
զոյացնէ մեզի Աստուծոյ գոյութեան վրայ,
անոր հրաշալի կարողութեան վրայ, անոր
գթութեան վրայ, անոր խանդավա-
տանքին վրայ ստաւապետներուն հանդէպ
և անոր գերագոյն զոհողութեան վրայ կոր-
ծուած մարդկութիւնը փրկելու:

Հաւատանք անոր, ու հոգեկան կորու-
վը պիտի զգանք մեր երակներուն մէջ
հաւատանք և հրաշքներ գործելու չափ զօ-
րաւոր կամք մը պիտի ուժովնէ մեր հո-
գին, հաւատանք և ամէնէն սուր ցուերն
ու վիշտերը պիտի կրնանք տանիլ՝ կրօնքի
սփոփանքովը սրտապնդուած. հաւատանք
և ամէնէն դժգոհի տաղանայները պիտի
չկրնան ընկճել զմեզ. հաւատանք և յու-
սահասութիւնը մուտ չալտի գործէ մեր
կիսնքին մէջ:

Հաւատանք, ու սիրենք մեր հայրերու
և եղբայրներու արիւնով նուիրագործուած
Հայ. Ս. Եկեղեցիին, ու մեր հոգեւոր
կիսնքը, ազգային կիսնքը, — բոլորն ալ
իրարու միացած անքակտելի, ամուր կա-
պով մը —, պիտի ստանան նոր ոյժ, նոր
կանոնաւորում, նոր սրբազորութեամբ, յոր
և նման քրիստոնէական առաջին դարերու
նուիրականացած, իսկապէս ընկերվարա-
կան կիսնքին ուր ամէն բան հասարակաց
էր, ուր հարուստն ու աղքատը ճշմարիտ
եղբայրասիրութեամբ մը կը բաժնէին ինչ
որ ունէին:

Ո՛հ, հաւատանք ու պիտի փրկուինք,
պիտի ազնուանանք, պիտի հասնինք ի-
սէալ բարձրութիւններու:

ԶԱՐԲԱՅՐ ԳԵՂԱՆՍԵՐ

Պէշիքաշ

ՄԵԿՆԱԲԱՆԱԿԱՆ

ԴԵԿՏԵՄԲԵՐ 6Ի ԱՌԵՏԱՐԱՆԸ.— (Ղուկաս, ԺԴ, 7-24):

Կոչումն եւ երկնային ճառ.— Փարիսեցիին սարքած հաղկերոյթի (=կոչումնք) միջոցին (Ղուկ. ԺԴ, 1—7) կոչնականներու «բարձրնախը» բլլալու նախանձոտ փութկառու թիւնը ուշադրութիւնը հրաւիրած էր Յիսուսին, որ պատշաճ «առակ» ով մը կը քննադատէ անոնց անմիտ ու անխոհեմ ընթացքը: «Առակ» բառը հոս իր իսկական նշանակութեամբը չարդարանալով, քանի որ այլաբանական օրինակ մը չէ մէջ բերուածը, այլ ընդհակառակը նոյն պահուն տեղի ունեցած իրողութիւնէ մը բարոյական դասեր կը հանուին: Սակայն նկատելով որ Ղուկաս յաճախ համառօտ ձեւի մը տակ կը ներկայացնէ ինչ որ Մատթէոս ընդարձակօրէն յտառ կը բերէ և որ Ղուկասու 13 համարը Մատթ. ի մէջ (ԻԲ. 1—14) դրուած հարսանիքի առաջիկը կը յիշեցնէ, անոր աւտալձը միայն բովանդակելով, կ'արդարանայ այդ բացատրութիւնը:

Աւետարանական այս հատուածը ցոյց կուտայ թէ Հրէից մէջ կոչումնքի ժամանակ հրաւիրեալներուն կանխաւ սեղանին վրայ մասնաւոր տեղ մը որոշելու սովորութիւնը չիկար: Առաջին եկողը ազատ էր իր նախընտրած տեղը գրաւելու. միայն եթէ պատուաւոր մէկը դարձ տանուաւորը իրաւունք ունէր տեղի փոփոխութիւն պահանջելու կանուխ եկողներէն: Այդպիսի պարտաւայ մը սակայն կրնար ընտանաւոր արժանապատուութեան զգացումի վիրաւորանք պատճառել, ուսկից զերծ մնալու համար խոհեմութիւն է խոնարհագոյն տեղի մը ընտրութիւնը: Ճշմարիտ արժանիքը պէտք է գնահատուի, իսկ գնահատուելու համար ալ պէտք չէ բլլայ փառքի հետախնդիր: Բարձրանալու պայմանը խոնարհելն է: Աւետարանական բարոյականի աւմէնէն մեծ սկզբունքներէն մէկն է այս, որ ոչ նուազ ընկերական կեանքի՝ ալ պայ-

մանն է: Յիսուսի այս խօսքերը դպիրներու և փարիսեցիներու հասցէին ուղղուած էին, վստիկ անոնք էին որ խոնարհատեան անափառութեամբ մը կը սիրէին «պառաջագահս յընթրիս» (Մատթ. ԻԳ. 5), և ուրոնց դէմ՝ արդար զայրոյթով մը՝ «վա՛յ» կարգացած էր Յիսուս: Այս անափառութիւնը ամէն դարու մարդկութեան արժանադրելի և ունեայնասէր դասի մը մէջ բացուած սե ու միտտ մէկ էջն է:

12—14 համարներուն մէջ ցոյց կը տրուի որ Աւետարանի աշակերտող գիտակից հաւատացեալ մը որ և է գործ պէտք է կատարէ առանց փոխարինութեան ակնկալութեան, այլ պարտականութիւն մը կատարած բլլալու համոզումով և սրտի իրական գոհունակութեամբ: Ասով միայն մարդը կրնայ արժանանալ երկնային և ճշմարիտ վարձատրութեան: Շահանդրական անազնիւ միտումները, զոր խսափ կը դատաւարատէ աւետարանը, ընկերական կեանքի ներդաշնակութիւնը կը խանգարին և քայքայումը կը պատրաստեն: Անպայման զոհաբերում, ա՛յս է Աստուծոյ պատուէրը և մարդուն պարտքը:

Յիսուսի խօսքը յանկարծ կ'ընդմիջէ «մին ի բաղմականացն», որ Աստուծոյ թագաւորութեան տանն ճաշ ուտելը եւ բանութիւն կը նկատէ: Շատ հաւանական է որ բաղմականին նպատակն էր այս մասին Յիսուսի գաղտնաբեր ալ շօշափել, անշուշտ իր համոզումն բլլալով թէ այդ երանութիւնը միայն արքայութեան որդիներուն (=Խորայէլացւոյ) վերապահուած էր: Յիսուս անուղղակի պատասխանով մը և առակով մը՝ զոր տարբեր մանրամասնութիւններով կը գտնենք Մատթ. ի մէջ (ԻԲ. 1-14), անոր թիւր ըմբռնումը կը մասնանշէ: Խօսակցութիւնը միշտ ընթրիքի շուրջ կը դառնայ:

Առակին մէջ «մեծ լծիթիք» պատարաստող փոխաբերաբար Աստուած է, իսկ

հրաւիրեալներն են Հրեաները՝ որոնք զանազան առարկութիւններով, և աշխարհային հոգեբոյր գերազանցելով հոգեւոր շահերէն կը մերժեն հրաւերը: Հրաւիրող ծառան Յիսուսի առաքեալներն են կամ Աւետարանը: «Տանուտէր»ը կրնայ նոյնապէս նաեւ Յիսուսի հետ. ասի կարելի է հաստատել 24 համարի «յրթրեայ խնոց» բացատրութեամբ, ուր ընթրիքը պատրաստողը կը ներկայանայ Յիսուս: «Ել վաղ՝ վաղակի ի հրապարակ» և ինչ. Աւետարանի բարձրագոյնը և հրապարակով քարոզութիւնը կը բացայայտէ, և աղիւսները, խեղերը, կաղերն ու կոյրերը կը խորհրդանշեն հեթանոսութիւնը (1) որ աւելի հեշտով պիտի լսէր Աւետարանի կոչը: 23. «Արա՛ւ այժմ մտանիւ», բնագրական բա-

(1) «Բարկանայ անբարկանայի բնութիւնն, մերժէ դժբայուն եւ հրաման սայ կոչել զհեթանոսս, ըզկաղացեալսն ի հանապարհացն աղաւորեան եւ զկուրացեալսն ի լուսոյ զիտութեան Աստուծոյ եւ զաղիւսացեալսն ի ճնորհաց հոգւոյն եւ ի հայրենի փառացն, ժողովել զնոսս ի գուենաց, ի փողոցաց ի հաղափէ ամբարճաց, ի չարեաց հանապարհաց»:

Ֆիլեասիոս մեկնիչ,

Մեկնութիւն Ղուկասու էջ 223

ուով (ἀναγγεῖν) կը նշանակէ համոզուելով հարկադրել որ մանեն. ա՛յս է Աւետարանի պաշտօնէին բռնելիք ընթացքը՝ ժողովուրդը ճշմարտութեան առաջնորդելու: Բռնութիւնը անազնիւ միջոց մ'է՝ որ ստուերած կը բերէ նոյն խակ ամենայայտնի ճշմարտութեան և պարտազանց ըմբոստացումի մը կ'առաջնորդէ միտքը:

Աստուծոյ թագաւորութիւնը պատրաստուած էր «սեփական ժողովուրդին» համար: Երբ Մեսիան եկաւ (=մեծ ընթրիքը պատրաստուեցաւ)՝ Աւետարանը (=Յիսուսի աւետարներ քարոզութիւնը) կոչեց «զհրաւիրեալսն» (=Հրեաները), որոնք ասկայն անարժան զսնուեցան մասնակցելու այդ սեղանին: Հետեւաբար Յիսուս առաջին եղբայրացութեամբ կը ցնդէ բազմականխն երազը թէ՛ «Երանի՛ր որ կերիցէ ճաշ յարգայութեան Աստուծոյ», յայտարարելով որ՝ «ոչ ոք յայնց կոչեցելոց (որոնց համար դու կը կարծես) ճաշակեսցէ յրթրեայ խնոց»:

ՄԱՆԵՐԻՉ

Ս. ԳՐԱԿԱՆ

ՔԱՌԱՐԱՆ

Ս. ԳՐՈՑ ԲՆԱՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ԲՈՅՍԵՐԸ

ԲԱԿԼԱ.— (Բ. Թագ. Ժէ. 28. եզեկ. Դ. 9). Եբր. բօջ (Pōl) Եւր. բօժ (xúamos) Բ. բ. faba vulgaris (հասարակ բակիա):

Արարացիք բակիային կ'ըսեն փոշ, զըրեթէ նմանածայն Եբրայական փոշ (Բակլա) բառին: Շատ կ'մշակուի Արեւելքի ամէն կողմերը մանաւանդ Պաղեստինի և Փ. Ասիայ մէջ: Միամիայ տունկ մըն է: Զերմակ կամ կապտագոյն սև բծաւոր ծաղիկներ ունի, կարծես ոչխարի աչքեր են ծաղիկները. հոտած հունտերը առ հաստ-

րակ հարուստին ու աղքատին կերակուր ու ուտելիքն է. շատ համեղ կերակուր կ'ըլլայ, Պաղեստինի մէջ ինչպէս Արեւելքի մէջ անոր հունտերը միտով կամ ձիթափեղով կ'եփեն. երկու կերպն ալ իր արտոյթելի համը հոտը ունի. աւելի արտոյթելի ընելու համար սոխ կամ սխտոր ալ կ'դնեն:

Պաղեստինի մէջ բակիայի ուրիշ տեսակներ ալ կան, որոնք առատութեամբ կ'աճին և որոնց հունտերը համեղաճաշակ կերակուրը կ'ըլլայ տեղացոյց: Այսպէս բակիայի կարգէն կ'համարուի phaseolus vulgaris (=հասարակ բակիա) և phaseolus multiflorus (հրազայն կամ բազմածաղիկ բակիա) տունկերն:

Առաջինը չիտակ կամ գալարուող ցո-

զուն մը և երեքտերեւեան կոթուններ ունի . տերեւները ձուածեւ և սրածայր են . տերեւանկիւններէն կ'ըլանին ծաղիկներն որոնք սակաւածաղիկ ծաղկողկոյններ կը կազմեն : Երկայնածեւ-կծկալը բազմասերմ է . սերմերը (շաքիսներ) հաւկիթած և ըստ մեծի մասին ճերմակ են , բայց նաեւ դեղին , մոխրագոյն , սեւ և բծաւոր լուրիւս ալ կ'գտնուի :

Երկրորդը՝ *phaseolus multiflorus* (բազմածաղիկ շաքիս), երկայն , պատաստող ցողուններ , ծիրանեգոյն կարմիր ծաղիկներ , և վարդագոյն կարմիր ու սեւ բիծերով սերմեր ունի :

Ս . Գրոց մէջ կ'կարդանք որ պաշարման ատեն Հրեայք այս հունտերէն ալ խառնելով պատրաստեցին իրենց հացը (Եղեկ . Դ . 9) . Մանայի մէջ Դաւիթի և իր զօրաց զրկուած պաշարին մէջ կար նաեւ այս հունտերէն (Բ . Թագ . ԺԷ . 28) :

ՍԱՄԻԹ. — (Մասք . ԻԳ . 23) Յուն . Անիթոն (ἀνιθον) բ . բ . *Anethum graveolens* (Տաճ . (σνιγου ορνι) :

Մովսիսական օրինաց համեմատ Իսրայելացիք պարստուր էին եղբորին հունտերու և պտուղին ստաներորդ մասը Աստուծոյ նուիրել (Դեւա . ԻԷ . 30) . Հնչին խոտերու տասանորդ տալն անգամ անհրաժեշտ էր : Բարբի Եղիազարի անաչառ վրկայութեան համեմատ Սամիթի հունտերը , տերեւները և բունը «տասանորդի ենթարկուած» էին : Սամիթը Թալմուտի մէջ յիշուած «Շապարն»ն է . Արաբացւոց մէջ նմանաձայն բառով ծանօթ է — «Շիպիթ» — և շատ կ'մշակուի Պաղեստինի և Սուրիոյ մէջ . հունտերը կ'գործածեն կերակրեղէններու մէջ իբր մի համեմ , բակլայի (=լուրիայի) և այլ տեսակ ընդեղէններու կերակուրներուն աւելի ախորժիկի համ մը տալու համար :

Արեւելքի մէջ լոկիկներէն ընդհանրապէս իբր փքահամ գեղ նաեւ կը գործածուի : Էպուսինա Արաբացի նշանաւոր բուժիչն Սամիթի բժշկական յատկութեանց վրայ խօսելով կ'ըսէ թէ ստամոքսի ամէնէն յարմար ամաքիչ դեղն է . ինչպէս նաեւ ջղացաւութեան և ոսկրազօղի ցուերու .

անքունութենէ տառապողներու համար նաեւ յարմար դեղ մըն է . անոր հիւթը աւանջի ցաւը կ'մեղմէ . շատ ուտելն ալ կը վնասէ աչաց տեսողութեան :

Սամիթը միամեայ կամ երկամեայ խոտ մըն է . հովանոցաւորներու կարգէն է և մէկէն մինչեւ երեք ոտք բարձր բուն մը ունի , տերեւները խիստ կտրասուած են , ծաղիկները մանր դեղնորակ են , և պտուղները տափակացած փոքր ձուածեւ են մէկ հինգերորդ մասնաչափ . գոյնը թխորակ է , և վառ գոյն մ'ունի . ծաղիկները կամ պտուղները այնպէս մը իրարու մօտ չարուած են որ հովանոցի մը ձեւ առած են . կծու , համեմատային և անուշաբոյր հոտ ու ճաշակ մ'ունի . այս խոտին միայն վայրի տեսակը կը գտնուի բուսական աշխարհի մէջ . միշտ խոյս տուած է մշակուելէ . թերեւս ի հնումն մշակուած ըլլայ : ԹԵՂՈՇ. — (ԵՍ . ԽԴ . 14) Եբր . Թիրզահն (=Tirzah) . — Եօթանասներորդ կ'պակտի , բ . բ . *Quercus ilex* .

Այս ծառը մէկ անգամ միայն յիշուած է Ս . Գրքի մէջ . այս ծառին փայտէն կը պատրաստուէր կուռք . Թեգօշը ամուր և սեղմ երակներով կարծր փայտ մ'ունի , ոմանք կը կարծեն որ եբր . Թիրզահն աւանայն հաւանականութեամբ բուսաբանութեան *Quercus ilex* կոչուած կաղնիի մէկ տեսակը եղած ըլլայ : Այլք կ'ենթադրեն որ Եբր . Թիրզահն բուսաբանութեան մէջ յիշատակուած *cupressus sempervirens* (=մշտադալար նոճին) եղած ըլլայ . ամէն պարագայի մէջ մեկնաբանք որոշ եղրակացութեան մը յանգած չըլլալով՝ Եբր . Թիրզահն փոխանակ թեգօշ կամ նոճի թարգմանելու լաւագոյն նկատած են Ալկումին և Ալմուկին պէս տառադարձութեամբ թարգմանել և ծառը կոչել ԹԻՐԶԱ .

ԱԱՊՊԱՐ (=Անիս կապպարի) . — Ժող . ԺԲ . «Ծ . Եբր . Ապիեեօնահ (Abiyyonah) . Յունտերէն *caparis spinosa* (καπρις) բ . բ . *caparis spinosa*, Տաճ . Բեպեր :

Այս կապպար բառին մէկ անգամ միայն կ'հանդպինք Ս . Գրոց մէջ : Կապպարը (լատ . *capparis spinosa*) առնակ մըն է որ ընդհանրապէս կը բուսնի ժայռերու և պա-

ընթացումը պատահաբար ճեղքուածներուն մէջ խոր արմատ թողլով . ցրուելով սոսորը ու արծաթելով տերեւները հին պարիսպներու վրայ՝ հաճելի երեւոյթ մը կուտայ պատերուն : Ծաղիկները սպիտակ են . տերեւները ձուաձեւ . հասունցած հաստապտուղները ձուաձեւ . երկայն են . պտուղները կծու և լեղի համ մը ունին և աղջուրին (սալամուրա) մէջ իբր համեմունք կ'գործածուի :

Արաբները կ'իշխեն «էշ ասաֆ» , մինչդեռ Պաղեստինի և Սուրիոյ ժողովուրդները Կասպար անունով կ'ճանչնան որ անշուշտ Յունարէն ֆաբարիս բառէն փոխառեալ է . այս տունկը աւելի Միջերկրականի երկրքը կ'աճի . բոլոր կծու համ տունկերու նման զրգոյն է : Տափական դիտումներ տարւն համար «փափաֆ» անունն ալ առած է : Պէյրութի Բարբիները կ'ըսեն թէ ծերերը աւելի կը գործածեն զայն ախորժակի զրգումն համար , և անշուշտի հետեւն ալ կ'գործածէին անոնք որոնց մէջ կը պակսէր փափաք կամ ախորժակ :

ԿԻՆԱՄՈՆ. — Ելից . Լ . 23 . Առակ . Է . 17) . Եբր . Բիննեմոն (=Kinnemón) Յուն . κιννάμωμον (=փիննամոն) Բ . Բ . Cinnamomum Zeylanicum . Տաճ . քարջին :

Կինամոնը շատ կանուխէն ծանօթ էր Հրէից . այնպէս որ յարմար նկատուեցաւ նուիրական իւզին քաղաղութեան մէջ խառնել . (Ելից . Լ . 23) : Կինամոնը կը գործածուէր անկողնոյ անուշահոտութեան համար . (Առակ . Է . 17) : Արեւելքի կիներ կօծուէր նոյն նպատակաւ : Միւս արեւադարձային տունկերուն նման կ'մշակուէր Սողոմոնի բուսաբանական պարտէզներուն մէջ (Եբր . Դ . 14) : Կինամոնը արտադրութիւնն է cinnamomum Zeylanicum ծառին . այս ծառը Դաւինի ընտանիքին կը պատկանի . աւելի ջերմագոյն գտառներու մէջ կը բուսի և մշտադաւար է . բլանիկ Սէյլանի ծառ մըն է . կ'գտնուի նաեւ Արեւելեան Հնդկաց Ուկիանոսի կղզեաց և Չինու մէջ : Ծառը կ'հասնի մինչեւ 30 ոտք բարձրութեան : Կինամոն համեմը Cinnamomum Zeylanicum ծառին ներքին կեղեւն է , քերծելով կ'կտրեն չերա չերա և կ'առ-

բածեն արեւին տակ և ուրիշ ու զաւարեալ ձեւ մը կուտան ինչպէս վաճառանոցներու մէջ կ'առնուի . Կինամոնի գոյնը բաց չաղանակագոյն է . ստառկա համ ու քաղցրախորժ է : Լաւագոյն Կինամոն իւզը կ'պատրաստուի հասունցած պտուղը եռացնելով : Յայտնութեան Գրքին մէջ (ԺԸ . 13) կ'կարդանք որ Մեծին Բաբելոնի վաճառականներուն վաճառքներէն մին էր Կինամոնը :

ԿԱՍԻԱ. — (Ելից . Լ . 24) — (1) Եբր . Բիսսահ (=kiddah) . Յուն . իրիս (իրիս) :

— (Սաղմ . ԽԴ . 9 , Եղեկ . ԻԷ . 19) — (2) Եբր . Բէթզիօթ (=Ketzióth) . Յուն . փափա' (σάπια) Բ . Բ . cinnamomum cassia .

Ս . Գրաց մէջ յիշատակուած Կասիան պէտք չէ շփոթել ընդհանրապէս բուսաբանութեան մէջ յիշուած Կասիայի տեսակներուն հետ (Բ . Բ . cassia sunna) որոնք կարտադրեն սիլանեֆին որ ծանօթ է բժշկութեան և վաճառականութեան մէջ : Cassia sunnaի այլ և այլ տեսակները կը գտնուին Արաբիոյ մէջ և տերեւներն իբր քրտնոցներ կամ մաքրողական դեղ տեսակով ծանօթ է :

Ս . Գրաց մէջ անուարկուած Կասիան cinnamomum cassiaն է . որուն թէ կեղեւները և թէ պսկոնները իբր անուշաբույր համեմ (պախար) ծանօթ է Արեւելքի ինչպէս և Արաբիոյ մէջ : Cinnamomum cassiaի կեղեւը Կինամոնի (քարջին) համն ու հոտն ունի և իր ընդհանուր երեւոյթովը ու յատկութիւնովը խիստ նման է անոր : Պլանկունքն ալ , այսինքն ահա ծաղիկներն կանոնադարձ ժամանակէն՝ կ'գործածուի իբր համեմ : Երկուքն ալ Չինաստանի արտադրութիւններն են . կոշտ տեսակները կարտադրուին Մալապարի , Մանիլայի և Մալբիտանական կղզիներէն : Հաւանական է որ ծանօթ բլար կանուխէն Յունաց և Հռովմայեցոց , վստիկ իրենց դատական հեղինակները Կասիայի մասին տեղեկութիւններ կուտան թէ և անորոշ և չիթեւած :

ԵԲԵՆՈՍ. — (Եղեկ . ԻԷ . 15) Եբր . Հոպնիմ (=Hobnim) . այս բառը կ'պակսի Եօթանասնից թարգմանութեան մէջ . Բ . Բ . Diospyros ebenum (=կարծրափայտ երեւոն) . Տաճ . Ապսնու :

Այս փայտին արաբական անունը — էպ-
նուս — Եբրայական անունն խիստ մերձ է .
Եզեկիելի Իէ . 15 համարին մէջ յիշատա-
կուած Երր . Հոպնիսն բառին նշանակու-
թեան վրայ երբեք պէտք չէ տարակուսիլ .
Երր . Հոպնիսն Երեմոս փայտն է : Եզե-
կիել կ'յիշատակէ զայն Դեզանի , այն է
Պարսից ծոցին վաճառականներու ձեռքով
Տիւրքոս բերուած ամենալաւ և յարգի ապ-
րանքներէն մին : Այս փայտը բուն իսկ
Diospyros ebenumի փայտն է . միւս տե-
սակները այնքան ընտիր չեն :

Այս ծառը իր աճամբը , ծաղկմամբ և իր
ուսուկի պտուղով՝ որ նաեւաձեւ հատապը-
սուղ մըն է , կ'նմանի հատարակ և ճա-
րնական Persimmon ծառին : Ծառին սպի-
տակուցը ճերմակ և անարժէք է , բայց
կեղզոնի միջուկը խիստ կարծր է և քանի
հիննայ՝ կ'սենայ :

ԿԻՊՐՈՍ . — (Երգ . Ա . 14 . Դ . 13) Երր .
Քօփըր (=Cōphor) . Յուն . κύπρος (Քիթ-
րոս) Բ . Բ . Lawsonia alba .

Կիպրոսը (=Lawsonia alba) 6—10 ոտք
բարձրութեամբ խիստ , հասուէտ եղրեա-
նիի նման ողկուղաձեւ ծաղիկներով , միջ ա-
զոյն կեղեւով , աժգոյն կանաչ ձուաձեւ
տերեւներով թուի մըն է :

Արաբացիք Ալ-Հէննա կ'կոչեն . Նուպիոյ
Եգիպտոսի և Արաբիոյ ժողովրդոց ծանօթ
է այս սուենը . կ'գտնուէր նաեւ մեռեալ
ծովուն մօտ գէպի էնկատատ (Երգ . Ա . 14) :

Արեւելքի ժողովուրդներուն շատ հաճելի
է այս տունկի բուրումնաւէտ հոտն . և
ասոր համար անպատճառ ծաղկեփունջերու
մէջ ստա մըն ալ այս Հիննայէն պիտի բլ-
լայ , ընդհակառակը Արեւմուտքի ժողո-
վուրդներուն համար այնքան հաճելի չէ և
նոյնիսկ անոր բոյրը նկատուած է ծանր ու
նողկացուցիչ հոտ :

Արեւելքի կիներ ինքզինքը յանկուցիչ ը-
նելու համար այս հասուէտ տունկին ծա-
ղիկներն իր կուրծքին կամ իր մազերուն
կ'գնէ . Բա՛ղդ Երգ . Ա . 13 . 14 . իր ա-
նուշահատութեան համար մշակուած է
միշտ նարգոսին , Հալուէին և Զմուռսին
հետ (Երգ . Դ . 13 . 14 .)

Արեւելքի կիները այս տունկին չարցած

տերեւներուն փոշին կ'գործածեն իրենց եւ
ղունգներուն , ոտքերուն և ձեռքերուն
նարնջազոյն կարմիր գոյն ստիւլ համար :
Եգիպտացոյ մոմեաներուն եղունգներն
այսպէս ներկուած գտնուեցան :

Արաբացի կիները այս փոշիէն պատրաս-
տուած ներկով կ'ներկեն իրենց արտեւա-
նունքները , իրենց երեսին և ձեռքերուն
վրայ իրեւ զարդ պատկերներ կ'գծեն :
Երբեմն իրենց մարմնոյն վրայ կ'կտեն պոտ-
կերներ և ապա կ'քսեն կառուածին վրայ
այս ներկը որ կ'թափանցէ մարմինն մէջ
այնպէս խոր , որ այս կերպով սպուած
զարդը մինչեւ մահը կ'մնայ անջինջ : Այս
կառուածները Արաբացիք գեղեցկութիւն կը
համարեն :

Այս ներկը երբեմն կ'գործածուէր մարմ-
նոյ բորբոքումներու համար այն համոզ-
մամբ թէ արեան համախառնումներ կ'ցը-
րուէ :

ՂԱՆՈՆԻ Յ . Վ . ԴՈՒՐՍՍԱՆ

ՔԱՀԱՆԱՆ

ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐԻՆ ԱՌՋԵԻ

Քրիստոնէութիւնը գիտակցութեան կը-
րօնք է , հետեւաբար անոր բոլոր պաշտա-
մունքներուն մէջ պէտք է արտաբայի
պաշտող հոգիին բովանդակ գիտակցու-
թիւնը : Ծէսերը , արարողութիւնները և
բոլոր այն ձեւերը , որոնք կրօնքին ար-
տաքին կամ գործնական մասը կը կազ-
մեն , նշանակութենէ զուրկ կը մնան բն-
ւորովին , եթէ անոնց մէջ պակաս հոգին ,
ներքին ոյժը : Աղօթքները նոյն իսկ , որ
յաճախ հաստատիւլ քանաձեւներու մէջ
ամփոփուած՝ կը թուիակաբանուին ժո-
ղովուրդի չրթներով անանգրագարձ ան-
փութութեամբ մը , անգոր և անարժէք են
բոլորովին , եթէ չէ գրուած անոնց մէջ ի-
մաստին ըմբռնումն ու համոզումը , կամ
քին շեշտն ու զօրութիւնը , բարոյականի
ջիղն ու սրբութիւնը :

«Բացարձակ կրօնքը եւ բացարձակ բա-
րոյականը երկու համանման եղրեր են : Հին

երկուութիւնը (dualisme) պարստուած է Քրիստոնէական գիտակցութեան միութեան մէջ» : «Կրօնի խնաստանութիւնը» գործին հեղինակ՝ Օ. Սապարիւի այս խօսքին մէջ կը գտնենք կրօնքի և բարոյականի յարաբերութեան հարցի ճշմարիտ լուծումը : Արդարեւ կրօնքի իմաստասիրութիւնը ցոյց կուտայ թէ կրօնքը իր սկսնաւորումին մէջ բոլորովին անջատ եղած է բարոյականէն, ինչպէս որ կը հասկնանք զայն այսօր . առօր անհերքելի ապացոյցը ազօթքի պատմութեան մէջ է :

Հին ժողովուրդներու ազօթքի բանաձեւերու մէջ, քիչ բացառութեամբ, կարելի չէ գտնել բարոյական այն վսեմութիւնը՝ որ յատկանշական փայլով մը կ'արտայայտուի բոլոր աշխուշած կրօններու և մանաւանդ Քրիստոնէութեան մէջ : Հոն ազօթքը չէ այն բարոյական յարաբերութիւնը՝ որ մարդը աստուծաւեճ կ'ընէ, այլ տեսակ մը գիւթաբանութիւն (incantation), կամ մոգական թաքուն զօրութեամբ մ'օժտուած բաւերու մեքենական արտադրութիւն՝ որ աստուծոյնը կը բռնադատէ մարդաւեճը ընդդէմ : Հոն «մարդկային ետականութիւնն է որ աղայական պարզամտութեամբ մը կը դիմէ աստուծոներու ետականութեան» : Մարդուն յարաբերութիւնը աստուծութեան հետ այն է՝ ինչ որ է իր ընկերոջ հետ : Կ'աղերսէ ու կ'սպառնայ մրանգամայն կ'օրհնէ ու կ'անիծէ, կը սրտաւ ու կը հարստծէ : Հպարտութեամբ կը թուէ իր անգթութիւնները և շնորհք կը պահանջէ անոնց փոխարէն : Միւս կողմէն սաի շատ բնական իրողութիւն մ'է քանի որ ազօթքը մարդկային հոգեբանութեան մէկ արտայայտութիւնն է : Մանուկ մարդկութեան մէջ այս արտայայտութիւնը շատ միակողմանի է՝ կրօնական հանգամանքով մը չեղտուած լոկ և անհատապաշտ ոգիով մը բնորոշուած : Հին կրօնքի քահանան կամ քուրմը տարբեր ըմբռնումներով և տրամադրութիւններով չէր ուղեւորէր իր աստուծոյն : Ան կը գիւթէր հաւասարապէս մարդն ու Աստուծոյ, խորհրդաւոր խօսքերու ճանաւոր և անփոփոխ կարգաւոր

րութեամբ մը՝ ուր սուրբաշնորհ զօրութիւնը տեղի կուտար հեթակայական անգիտակից մտաքանդացումի մը (extase) : Աստուծոյ ձայնը չիկար մարդուն գիտակցութեան մէջ և ոչ աստուծային յայտնութիւնը մարդկային : հազիւ խորը : Հնութեան պատգամները թէ Նեղոսի ափերուն վրայ բարձրացած Մէմփիսի մեհեանէն եկած ըլլան անոնք, թէ՛ Պարնասի ոտքին առջեւ տարածուած Դեզփիսի դարբէնը, մարդկութեան պատգամներն են՝ աստուծոյ ծանման երեւակայութեամբ մը սրբազնացած և հեղինակաւորուած : Թէեւ աստուծայինը մարդկայնութեամբ միայն կրնայ յայտնուիլ՝ աստիճանական յառաջացումով մը՝ գիտակցութիւններու մէջ :

Այս յայտնութիւնը ընդհանրապէս խորհրդագէտներով և մանաւորապէս մարդաբաններով սկսած՝ քրիստոնէութեամբ լրացած է : Դիւթանքը փոխոնակուած է յստակ հոգեհաւքաւք մը, ուր մարդն ու Աստուծոյ կը հանդիսադրուին, զիրար կը գնեն և իրարու կը զիրկնդիտանուին : Քրիստոնէութեան և քրիստոնէին համար ազօթքի նշանակութիւնն ու զօրութիւնը այդ գերազանց զէմյանդիմանութեան գիտակցութեան մէջ է : Այս գիտակցութիւնն չստեղծուիւր ձեռած ու չստեղծած բանաձեւերու մտայնի ու թուութեամբ կրկնութեամբ, այլ մաքի ու նամքի հզօր ու թափանցող սեւեռումով մը աստուծոյնկալ սրտի մը խորքէն դուրս եկած հեծեծանքի, խօսքի ու ազօթքի ոգիին ու իմաստին վրայ : Հնդկական «ազօթազայ» ներք [moulin à prière] որքան ճախրեն հովերու խօս թեւերուն մէջ՝ պիտի չկրնան զօղել երկնայինը երկրայինին, անիւթը նիւթականին, տեսականը գաղափարին, կրօնքը բարոյականին, աստուծայինը մարդկայինին հետ :

Բայց այդ աղօթադաշտները, որոնք թերեւ իրենց գոյութեան իրաւունքն ունենին հնդիկ կրօնին մէջ, կը կիրարկուին այսօր քրիստոնէութեան ծոցն ալ : Դժբախտ իրականութիւն մ'է այս՝ զոր յիմարութիւն և ինքնի պատասխանատուութիւն պիտի ըլլար ծածկել : Դիտեցէք քահանան, նիհար

բայանութիւնը յարգելով, խորհրդատու-
րին տուցէ : Ազօթաղայը կը դառնայ ծայրէ
ի ծայր, անհամբեր և ունակութեամբ յախ-
րացած ազօթաղը կը շրթնէ թուր խօս-
քերը—ծածուկներուն համար Աստուած մի-
այն գիտէ թէ ո՛րքան ճշտութեամբ— և
ժողովուրդի հոգեւոր շինութեան համար
սահմանուած մեծ կտակը կը կատարուի,
կը լրանայ : Եւ քահանային այս անգիտա-
կից ու մեքենական դիւքը կ'սկսի խորհրդ-
դատարի առաջին էջէն իսկ, ուր մեծ Զոհի
յիշատակը կատարող պաշտօնեան, հոգեւո-
րականը, Նարեկի հոգեւոր և աստուածա-
խօս վարդապետի բերնով կ'աղերսէ «ան-
մուռնջ հեծութիւններով» մեր գիտակցու-
թեան խորը խօսող աստուածային «ամե-
նակալ, բարերար, մարդասէր» Հոգիին :
Ահ, ապահով եմ որ Նարեկացիին հոգին
այդ բառերուն արտաբերումին մէջ չէ, որ
կրնար դիւթել միայն հին դարերու աստ-
ուածները, այլ անոնց իմաստի բմբռնումին
մէջ, որով միտքը կը ներշնչուի, կը վե-
րանայ և կը միանայ այն Տիգրարին հետ՝
որուն յիշատակը կը կենդանացնէ Սեղանի
պաշտօնեան : Ուստի պիտի չգտնուին ան-
շուշտ ըսողներ, ռամկական զրոյցի մը մէջ-
բերումով, թէ ազօթքի արդիւնաւորումը
կախում ունի ազօթաղին սրտի մաքրու-
թիւնէն և բարի սրամազրութիւնէն, աստի
ճիշտ է սրանէն ինքնաբերաբար բխող ա-
զօթքներուն համար՝ որոնք հոգին կը թարգ-
մանեն անխարդախօրէն :

Հին երկուութիւնը (կրօնքն ու բարոյա-
կանք) պէտք է պարտուի իւրաքանչիւր
քրիստոնէի գիտակցութեան միութեան մէջ :
Այդ միութենէն պէտք է բխի ազօթքը,
պարզ, իմաստալից և հեթանոսական նկա-
րագիրէ զերծ, որ զուգէնթաց «խնկիլի ըն-
տիր վարուց»՝ իր կարգին կը միաւորէ
ՄԱՐԴԸ ԱՍՏՈՒԾՈՅՆ, Աստուածամարդուն
մաղթանքին համաձայն թէ՛ «Ես ի նոստ
և Դու յիս, զի եղիցին ԿԱՏԱՐԵԱԼՔ Ի ՄԻ» :
Մըմբրեանի Նարեկի աշխարհաբար թարգ-
մանութեան այս անգամի հատուածը թե-
լադրեց մեզ այս դիտողութիւնները : Մենք
մասնաւոր դիտումով ընտրեցինք այս հատ-
ուածը՝ որդէսդի գէթ աշխարհաբարի մի-
ջոյաւ մեր կարգ մը հոգեւորականները
գիտնան ըմբռնեալ անոր իմաստի վսեմու-
թիւնը, որքան ալ դարերու խորերէն և
վանքի մը խորշերէն արտափայլի այն : Գի-
տակցութեան ձայնը մի է ամէն տեղ և
ամէն ժամանակ, թէև զանազան երևոյթ-
ներու տակ յայտնուած՝ դարերու ընթաց-
քին մէջ :

Երանի՛ թէ Գրիգորի մը գիտակցութիւնը
արթնար՝ կայծակնամաքուր յայտնու-
թեամբ մը՝ բոլոր հոգեւորականներուն
էութեան խորը, ստեղծելով կրօնի ու բա-
րոյականի միութիւնը անմախապաշար գի-
տութեամբ մշակուած մեր մտքերու և
անշահադէտ բարութեամբ սրբուած մեր
սրտերու խորին խնամութեան մէջ :—

ԳԱՐԵԳՈՒՆ ՎԱՐԴԱՊԵՏ

ԽՕՍԲԸ

Խօսքեր կան՝ որոնք մեզիս զօրաբան մ'ունեն իրենց մէջ. նախադասութիւններ
սրունք իրենց արագութեամբ մէջ աննուն խորհուրդներ կը ծածկեն : Միտ չեզուն քանալին
ե այդ ամենուն : Միտք կը տարաբանէ, կը վերածէ, բայց մը կը տարաբանէ, կը հա-
մադրէ, կը ներդաշնակաւորէ և եզրակացութեան մը կը բերէ այն յոյս իրադարձութիւն-
ները՝ որոնց մէջ կը փոխադրուի միակ բանի մը ներշնչումով. և հոգեխառնակ այդ բարդ
փնտրելը՝ իր սակարկ երանգովը՝ արտաբերուած կը տեսնէ հոգին միակ պարզութեան մը
մէջ : Այնքան՝ արտ յոյսով որոյրած՝ հազար անգամ կ'երթեւեկեն անոր վրայ և ամեն
անգամ յիշատակներու նոր փունջ մը կը կազմուի արեւոյն խորաններու վրայ :

Այսպէս է Աւետարանի ԽՕՍԲԸ :

ԿՐՈՆԱ-ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

1.—ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ՆՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ
Յ. ԷԺ. ՄԱՐԲԵՐԵԱՆԻ

ԱՂՕԹՔ

ՈՐ ԿԸ ՄԱՏՈՒՑՈՒԻ ՊԱՏԱՐԱԳԷՆ
Ա. ՌԱՋ

Աստուծոյ թաղանթաւ մարդասէր Աստուած բոլոր արարածներուն, որ յօրինեցիր երկ-
ւելիներն ու աներեւոյթները, որ կը փրկեն
ու կը հաստատեն, կը խնամեն ու կը խա-
ղաղեն, հզօր հոգի՝ Հօր, կը հայցենք յան-
դիման անաւորիդ՝ բազկատարած մաղթե-
լով գոչելով ու հեծելով։ Մեծ գոգու-
թեամբ և սաստիկ երկիւղով՝ կը մօտենանք
մատուցանելու նախ այս բանական պա-
տարազը քու անդին զօրութեանդ, որ
իր ակողմակիցը փառակիցն ու արարչա-
կիցն եւ հայրենի անկապուտ պատիւին և
իրեւ քննողն ամենակատար կամայք խոր և
ծածուկ խորհուրդներուն Հօրն Էմմանու-
էլի, որ առաքեց Քիզ, և կը փրկէ ու
կեանք կուտայ ամենուն և կ'ստեղծէ ա-
մենը։ Ո՛վ Ս. Հոգի, Քու միջոցովդ
յայտնուեցան մեզի միասնական Աս-
տուածութեանդ երբեակ անձնաւորութիւ-
նը, որոնցմէ մին կը ճանչցուիս Դու եւ ան-
հասանարար։ Քեզմով և Քու միջոցովդ ա-
ռաջին հարք նահապետական տոհմին չա-
ռաւիղները՝ տեսնող սնունտուած՝ վե-
րապատմեցին, պարզ ու անստուեր բա-
նականութեան բարբառով, անցեալ ու ա-
պագայ գոյացեալ ու զեռ չգոյացեալ բա-
ները։

Մովսէս քարոզեց զՔիզ ոգի Աստուծոյ, որ՝
անպարզիր զօրութիւն՝ նախաստեղծ ջու-
րերուն վրայ տածող և զրգացող ահեղ
չրջարկութեամբ չարածող ատեն. պահ-
պանական թեւարկութեամբ գթաարեւով
նորոգ ծնունդներուն վրայ՝ Ս. աւագա-

նին խորհուրդն յայտնեցիր (1)։ Որուն իր-
քե նախօրինակ՝ երկնային վերջին վարա-
գոյրին (չոգիացեալ ջուրերուն) լոյծ մած-
ուածը կառուցանելէն առաջ՝ ոչնչէ յօրի-
նեցիր տիրական կարողութեամբդ ամեն
էակայ և գոյացութեանց բովանդակ բը-
նութիւնը (2)։ Քու զօրութեամբդ կ'ստեղ-
ծուին յարութիւնաբար նորոգուելով՝ Քենէ
գոյացեալ ամեն եղականք ա՛յն ժամանա-
կը, որ է այս կենցաղին վերջին օրն և
յաւէրժ կենդանիներու երկիրին առաջին
(ու միշտէ) օրը։ Քեզի հնազանդեցաւ
Քու ազգակից և Հօրն էակից սնդգանիկ
նրդին մեր ժարդկեղէն կերպարանքովը՝
միաբանելով իր կամքը Քոյիդ՝ ինչպէս և
իր Հօրը. ու աւետարանեց զՔիզ ճշմարիտ
Աստուած՝ հաւասար ու համազոյ իր հզօր
Հօր, և անքաւելի հոչակեց Քեզի դէմ
եղած հայհոյութիւնը, և պապանձեցուց
քեզմէ հետեւաներուն զարարանական բե-
րանը՝ իբրեւ աստուածամարտնետ բերա-
նը՝ և իր դէմ եղած հայհոյութիւնը նե-
րեց՝ ինք որ արդար, անարտա և ամենուն
ստացող տէրն էր, որ և մեր մեղքին հա-
մար մասնեցաւ, ու մեզ արդարացեալու
համար մահուան վրայ յաղթութիւն ստա-
րաւ։ Քու միջնորդութեամբդ փառք ա-
նոր ու Քեզի բարեբանութիւն ամենակալ
Հօրն հեա յաւիտեանս յաւիտենից. ամեն։

Կրկնութիւն նոյնակարգ աղօթքի՝ միկնել
որ հոգոյն ազդունով հրաշապէս յայտնուի
վստահութեամբ յոյսին ծագումը։

Կ'աղաչենք ու կ'աղերսենք բովանդակ

(1—2) Հոս նաեկացին ստեղծագեղական հո-
գեհտութեամբ բացարձակապէս վտեմ է, իբրեւ մաս-
նական բարգման ճիշդեման ու ճիշդեմանեղ-
ծական մեծ յայտնութեան՝ զուգորդելով զայն Բիս-
սոնէական գերաբուն յայտնութեան ինքնին մա-
նուակ իր պարզ խորութեամբն կ'անցնի Պաւստոս
ու Միլսոնը, եւ կը փառակցի Մովսէսի աստու-
ծաւես համեմարին։

ԹԱՐԳՄԱՆԻԸ

անձով ու արտասուելից հառաչումով ան-
ժամանակ անեղծ ու անստեղծ, փառաւոր-
եալ արարչութիւնը զթած Հոգիիդ՝ որ
մեզի համար անմուռն հեծեմանքներով կը
բարեխօսես ողորմած Հօրդ. Դուն որ կը
պահպանես սուրբն ու անսուրբը, մեղա-
ւորները կը մաքրես՝ առճարներ յարդա-
րելով անոնք Քու բարձրեալ Հօրդ կեն-
դանի ու կենդանարար կամայք: Ազատէ՛,
հապա՛, մեզ ամէն անմաքուր գործերէն՝
որ հաճոյ չեն թուիր Քու բնակութեանդ
մեր մէջ ու մեր կողմէն թող չմարին Քու
չնորհաց լոյսիդ փայլումները մեր տեսա-
կան աչաց զգայութիւններէն, վասնզի
սորվելով գիտցանք որ Դու կը յողանաս
կը միանաս մեզի՝ ազօթքի և խնկելի ու
ընտիր վարքի միջոցով: Եւ քանի որ Եր-
րորդութենէդ երկրորդը կը պատարագուի
և առաջինը կ'ընդունի զայն հաշտուելով
մեզի հետ և հաճելով իր անդրանիկին
խաղաղարար արիւնովը, Դուն ալ ընդու-
նէ՛ մեր պաղատանքը, և հանդերձէ զմեզ
ամէնապատրաստ պատուական օթեւան-
ներ՝ վայելչապէս ճաշակելու համար երկ-
նուոր այդ Պառնը, և առանց դատապար-
տութեան պատիժի ընդունելու համար նոր
փրկութեան կեանքի այս անմահական մա-
նանան: Թո՛ղ այս հուրին միջոցով հալի՛
մեր մեղքին գայթակղութիւնը, ինչպէս
հալեցաւ Սաայի մարգարէինը՝ ունելիով
մատուցուած կենդանախաղաղ կրակովը,
որպէսզի Քու Դիւթութիւնդ հուշակուի՝ ա-
մէն քանի մէջ, ինչպէս քարոզուեցաւ Հօր
քաղցրութիւնը Աստուծոյ այդ Որդւոյն
միջոցով, որ պարզեց անառակ որդիին
հայրենի ժառանգութիւնը, և պոռնիկներն
յառաջ մատոյց երկնային արքայութեան
մէջ՝ երանակից ընելով անոնք արդարեւե-
րուն: Այո՛, այո՛, ևս ալ անոնցմէ մին
եմ. ընդունէ՛ զիս ալ անոնց հետ իրեւ
կարօտ մեծագոյն մարգարտութեան, իր-
րիւ շնորհօք փրկուած և Քրիստոսի ա-
րիւնդին ստացուած անձ մը: Որպէսզի այս
ամէն շնորհներուդ մէջ՝ ընդ ամենայն
ճանցուի Քու Աստուծութիւնդ, Հայր
Աստուծոյ հետ փառաւորուած համապա-
տիւ համակամ ու համընթաց գովարան-
եալ. զի և Քուկդ է գթութիւն և կարո-
ղութիւն և մարդասիրութիւն, գորութիւն
և փառք յաւիտեանս յաւիտեանից. ամէն:

ՀԵՐՈՎ ՊԻԱՊԱ

Այն կիներ՝ որ միայն աշխարհիս վրայ ինծի
պէս ամէն մէկ դարեւու վերջանալը կը տես-
նէ՝ տակաւին դար մըն ալ անցաւ ըսելով,
այն կիներ՝ աշխարհիս մէկ ծայրէն միւսը իմ
մտէն անցածներուն կը պատասխանէ....:

ՅԱՓԱՌԱՎԱՆ ՇՐԵԱՅ

Իր անպարիւս, կնոջական
կազաւումին մեջ դառնաղու
Վճի՛ր մը կար. վճի՛ր մահուան:

Հո՞ծ խաւարներ մեջսեղ եկան
խիղճին, մարմինն վրայ տիրելու
Իր անպարիւս, կնոջական:

Կը կախաւոր մինչ անվարան,
ձօնող լանջին տակ ակնառու
Վճի՛ր մը կար. վճի՛ր մահուան:

Ընչաքաղցի տենդն անըման
Կ'ընէր հոգին մարմնէն հեռու
Իր ապնարիւս, կնոջական:

Կախաւման հետ աւբարտաւան
Կոյր գաղտնիքի պէս քնածու
Վճի՛ր մը կար. վճի՛ր մահուան:

Անմեղ զոհին դէմ իրական՝
խիթն ունեցաւ սարսուռներու
Իր անպարիւս, կնոջական:

Վճի՛ր մը կար. վճի՛ր մահուան:

Ա՛ն որ լափեց դա՛ղձն ալ վայրի
Ու օգիւղոր՝ ջուրի փոխան,
— Հէ՛ք ուրուական անապասի —

Ձի հաւսացին բայց լրբենի՝
Կո՛յր ջոկերը այն մարդկութեան,
Ա՛ն որ լափեց դա՛ղձն ալ վայրի:

Եւ խո՛նջ գանկը մեծակեացի
Սկուտեղը ընտրեց կայան,
Հէ՛ք ուրուական անապասի:

Թողուց իր ցաւն արհաւիրալի
Նե՛նգ սիրին մեջ կնոջական,
Ա՛ն որ լափեց դա՛ղձն ալ վայրի:

Սկուտեղն ու գանկն իր սուրբի
Բողոքի մը ձայներն եղան,
Հէ՛ք ուրուական անապասի:

Մարախակեր մարգարէի
Հնչեցուց փառքն յաւեսական,
Ան որ լափեց դա՛ղձն ալ վայրի:
Հե՛գ ուրուական անապատի:

Եկաւ անեծք մ'Հերովդիայի,
Կացուց աղջիկ մը միշտ բափառ,
Եւ սպասեց օր մը մահի:

Երբ Հերովդէսն՝ հե՛ք Յովնանի
Բանտարկանին սոսկանիհար
Զայնեց անունն.— «ո՛վ Մանայի,

«Ե՛ս ալ տեսնեմ գլուխն Յովնանի»,
Մինչդեռ Արաբ մարդն այդ նիհար,
Բերաւ գլուխն Հերովդիայի...:

Դողաց արքան. «Ահ, Մանայի՛...»:

ԼԵՒՈՆ ԷՍԱՅԱՆԵԱՆ

2. — Թ Ա Տ Ե Ր Ա Կ Ա Ն

Ս. ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵԻ

ԿԱՄ

ԱՐՇԱԿՈՒՆԵԱՅ ԹԱԳԱՌՈՐՈՒԹԵԱՆ ԲԱՐՁՈՒՄԸ

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ (*)

Մէկ նախերգանով, վեց արարուածով եւ մէկ
վերջաբանով.

Գ Ր Ե Յ

ԴԱՐԵԳՈՒՆ Վ. ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ

(Ի Դպրեկանուց)

(Շարունակութիւն Բ. թիւին)

Վարդան

(Նոյնպէս յուզուած)

Հայրենիքս երկնեց զիս՝ ու ծնաւ, հոն
մնայ եւ դեռ կ'ապրիմ, պիտի գործեմ ու
պիտի մեռնիմ անոր փառքին համար:
Բայց, միայն իմ մահովս պիտի կրնայ վե-
րածնիլ ու ապրիլ հայրենիքս. ա՛յս է որ
միահաղուած ինձ կը պատճառէ ինձ: Թէև
չեն պակսիր ինձ համախոհ քաջեր, ազնիւ
նախարարազուն կարիճներ, հայրենասի-
րութեան հռչակով վառուած սեպուհներ,

(*) Ամեն իրաւունք հեղինակին վերապահուած է

բայց ամենքն ալ Արապչէսի նկատմամբ
չառ ցաւքս են: Եւ ասոր մէջ՝ կը կրկնեմ,
թէ՛ յանցաւորը երիտասարդ Արշակունին
է, որ չափազանց անխոհեմ է փյուռն պատ-
ճառներով վիրաւորելու արժանապատուու-
թիւնը անոնց՝ որոնք թերեւ իրմէ ա-
ւելի արժանիք ունին եւ իրենց պատկառե-
լի տարիքովը, փորձառութեամբ ու անձ-
նուէր ծառայութիւններով աւագձուն,
կրնան լաւագոյն օժանդակներն ըլլալ ի-
րեն: Չեմ գիտեր Արշակունի արիւնին է
պատճառ թէ...

Եղիշե

Թէ Հայի ջուրը, թերեւ պիտի ուզէիր
ըսել: Առաջինը աւելի հաւանական է:

Տ Ե Ս Ի Լ Ե.

ՆՈՅՆՔ ԵՒ ՍՄԲԱՏ

Սմբատ

(Խորունկ հառաչանով մը ներս կը մտնէ աջա-
կողմի դռնէն եւ ծանախայլ կը յոռաջանայ դէպի
Սահակ):

Սահակ

(Ներկաներուն դառնալով եւ Սմբատը մասնացոյց
ընելով):

Պատկառելի տարիներու եւ խայթուած
գիտակցութեան մը խորերէն դուրս թռած
արտայայտիչ հառաչ մ'էր այն՝ որ ուժ-
գրնօրէն արձագանգեց ի՛մ ալ խոցոտուած
սրտիս մէջ:

(Սմբատի դառնալով):

Նստի՛ր մօտս, պատուական ասպետ, եւ
պատմէ՛ մեզ սրտիդ ցաւերը:

Սմբատ

Սրտիս ցաւե՛րը...

Սահակ

Այո՛, սրտիդ ցաւերը՝ որ բոլորիս է հա-
ւասարապէս:

Սմբատ

(Գլխիկոր եւ մտախոն)

Սրտիս ցաւե՛րը... Վարդանի խօսքե՛-
րը... պղտոր արիւնը... Արշակունիին...

(Վարդանի դառնալով եւ բաւր շեշտով.)

Այո՛, Վարդան, և ո՛չ թէ անարատ ջուրը սուրբ հայրենիքին :

Աղան

Եւ միայն Արշակունիքի՞ն արիւնը . Հոյատանի երակներուն մէջ չի՞ վազեր նաեւ ուրիշ արիւն , աւելի ազտոտ թերեւ քան Արշակունիքի , թէեւ աւելի հարազատ քան վերջինը :

Յիլիեհ

Այո՛, այո՛, և հարազատի արիւնը աւելի վատնազաւոր է՝ երբ անիկա թունաւորուած է եղբայրատեսաց ատելութեան մը սերմերով :

Աղան

Յիլիեհէ՛ք, օ՛հ, յիլիեհէք այն ընտանի անվերջ կռիւները՝ որոնք երբեմն ահաւոր պառակտումներ յառաջ բերած են Նախարարական տուններուն միջեւ և երբեմն ալ նոյնիսկ զիրար անճիտած : Մանաւազեանց և Որդունեսաց յիշատակը սակաւին անջինջ է իր սարսափ ազդող հանգամանքովը : Արտաշէս անփորձ երիտասարդ մ'է , իր իշխանական պերճանքովը հպարտացած քան թէ կոչումի գիտակցութեամբ լրջացած : Իրաւունք ունի Վարդան երբ կ'ըսէ թէ նախարարներու հետ վարուելու կերպը չը գիտեր նա . բայց ոչ նուազ ճշմարիտ է կարծեմ թէ նախարարները իրենց կարգին թագաւորը սիրաշահիլ չեն գիտեր յօգուտ ազգին և ընդհակառակը զանի ինկած սուսնելով՝ կը կրկնապատկեն իրենց տոնահարութիւնները անհասական և հանրական շահը անտեսող ծրագիրներ չինելով շարունակ :

Մմբաս

Օ՛, ատի չա՛տ ճշմարիտ է . եթէ նախարարները միացեալ ոյժ մը կազմէին . . .

Աղան

Այո՛ . եթէ նախարարները միացեալ ոյժ մը կազմէին միակ գաղափարի մը սպասարկութեան համար՝ հաւատացէք որ Արտաշէս տարբեր մէկը կրնար ըլլալ : Արտաշէս ո՛րքան պատասխանատու է անձ-

նապէս հայրենիքի այս ողբալի կացութեան և քննադատելի իր կենցաղը , ա՛յնքան պախարակելի է Նախարարներու նպատակաւոր ձեռնպահութիւնը և նենգամիտ նախանձախնդրութիւնը՝ որ սեփական թագաւոր մը , ինչքան ալ զզուելի և յանցաւոր ըլլայ այն , այլակրօն և աւելի քան զԱրտաշէս գարշելի արքայի մը ձեռքը յանձնելու չափ հաւաք կ'երթայ :

Է՛հ , արիւն և ջուր չեմ գիտեր որ՛քան կ'ազդեն նկարագրին վրայ , բայց ամէն պարագայի սակ ես ուղղակի պատասխանատու կը գտնեմ նախարարները :

Վարդան

Ատոր տարակոյս չիկայ : Հայոց ճակատագիրը նախարարներու ձեռքն է , և ասոր համար իսկ ես կը քննադատէի Արտաշէսի բռնած ընթացքը : Ինչքան որ եւրիտասարդ՝ նա պէտք է իր պաշտօնին բերումով հասունցած ըլլայ ազնիւ թիւազերութիւններով բոլոր անոնց՝ որոնք անկեղծութեամբ և գուրգուրանքով կը շըրջապասեն զինքը մասնաւոր ընելով սխալը և ուղիղը : Գիտեմ , պիտի աւարկէք թէ ցոյց արուած ո՞ր ուղղութեան հետեւելու է , և իրաւունք ալ ունիք : Բայց այդքան որոշում մ'ընելու կարողութիւնն ալ չպակսիր կարծեմ Արտաշէսի մօտ , եթէ գէթ արիւթիւնն ունենայ հրաժարելու իր շամբուշ կեանքէն՝ որ իր մաքի կշիռը կը խանգարէ և զինքը սպառնալիքի առջեւ անսարքեր կ'ընէ : Ո՛րքան ազդարարութիւններ եղան պապուս կոզմէ , որքան ժամեր անցուցի ես իր մօտ՝ զինքը ցնցելու և արթնցնելու փորձեր ընելով , բայց ի զո՛ւր , ա՛փսոս :

Ասով չեմ ուզեր արդարացնել նախաւորները , քաւ լիցի , անոնք անխիղճ խաղացողներ են ազգին ճակատագրին հետ :

Յիլիեհ

Վահեւունիի մասին բան մը գիտե՞մ , Մամիկոսեան :

Վարդան

Գիւտի՞ :

Յիլիեհ

Այո՛ :

Վարդան

(Կակծաղի հեզնութեան մը)

Հըմ... կորուստի գործակիցներէն մէկն
ալ նա՛ է, Գիւտը:

Աղան

Գիւտը:

Վարդան

Այո՛, Գիւտը, ես աւելի զանի պիտի
ուզէի կոչել Կորուստ:

Ամբաս

Կեցցե՛ս, սպարապետ, գեղեցիկ գիւտ:

Եղիշե

(Սահակի դառնալով եւ խորհրդաւոր ակնարկով մը)

Կարելի՞ է հաւատալ, Տէր իմ:

(Վարդանի ուղղելով խօսքը)

Եւ դու հարկաւ բաստեր ունիս:

Վարդան

Տարակոյս չիկայ. կասկած մը չէ լոկ.
բայց թողունք զանի՝ որ իր հոպիտի դերը
շարունակէ տակաւին. օր մը գիմակը վար
կ'առնուի եւ դուք կը տեսնէք անոր իս-
կական պատկերը:

Աղան

Ես կը փափաքիմ որ սխալած ըլլաք:

Վարդան

Երանի՛ թէ...

ՏԵՍԻԼ Զ.

Նոյնի ու Սուրհանդակ

Պարգեւ

(Նեւս կը մտնէ սուրհանդակի՝ Պարգեւ եւ յար-
գայից Սահակի Այր համբուրեով՝ կը յանձնէ անոր
նամակ մը):

Սահակ

(Ուրախութեամբ)

Ապր'ս, Պարգեւ, շա՛տ ապրիս. շուտով
կրցար կատարել սրշածնդ:

Պարգեւ

Ի զուր պարգեւ չեմ կոչուած, Տէր իմ.
չէ՞ որ ծնողքս կեանք պարգեւել է ինձ,
որպէս զի ես եւս Ազգի՛ս պարգեւեմ զայն:

Սահակ

(Մէկ կողմէն նամակը բանարով)

Օրհնեալ ըլլաս, զաւակս: Ճամբան շատ
նեղութիւն քաշեցիր:

Պարգեւ

Օհ, հաւատացէ՛ք, Տէր իմ, խի՛ստ, խիստ
հեշտ կուգար ինձ ճամբան. վասն զի իւ-
րաքանչիւր քայլափոխիս հայրենիքիս
սուրբ հողը իմ սփից տակէն կանծես զիս կը
քաջարեւր. «Դե՛հ, Պարգեւ, արագի՛ր
քայլերդ, հայրենիքդ վասնքի մէջ է,
շատապի՛ր»: Ինձ կը թուէր թէ Վարդա-
դանան քայլեր կ'առնէր:

Սահակ

(Կասկածախառն եւ խաւովի)

Ինչ պիտի ըլլայ ուրեմն քո պարգեւը:
Պարգեւ

Ես ինքս արդէն պարգեւ եմ, Տէր իմ.
բայց, եթէ ներէք, ձեզնից կը խնդրեմ
խիստ թանկագին մի պարգեւ. հայրենի-
քիս փրկութիւնը:

(Վարդանը մտնանքով)

Վկա՛յ Մամիկոնեանց Տէրը՝ թէ ես մի
այլ պարգեւ կը ցանկամ:

Վարդան

Ապրի՛ս, քաջդ սուրհանդակ, լուսագոյնն
ընարեցիր:

Բոլոր մէկ բացի Սահակ:

Ապրիս՛, ապրիս՛:

Սահակ

Աստուած օրհնէ զքեզ, զաւակս. ա՛յլ
դու գնա՛ հանգչէ, յոգնած ես:

(Սուրհանդակը խոնարհելով կը հեռանայ):—

ՏԵՍԻԼ Է

ՀՈՅՆՔ բացի սուրհանդակէն

Սահակ

(Նամակին վրայ գորգուրալի եւ հաբեւոնցի
ակնարկ մը նետելէ վերջ՝ Վարդանի դառնալով եւ
նամակը անոր երկարելով):

Ա՛ռ, Վարդան, կարգա՛ պատուովան

վարդապետիս սա պատուականագոյն հա-
մակը, վասնզի ան ազգին կը վերաբերի :

Վարդան

(Հետաքրքրութեամբ կ'առնէ նամակը եւ կը կարդայ
բարձրաձայն) :

Պատուական Տէր իմ եւ Ս . Հայրապետ ,
Բաջ սուրհանդակի մը միջոցաւ զրկած
նամակնիդ չկրցայ կարդալ առանց յուզուե-
լու . կարդացի զոյն կրկին ու կրկին . ինչ
կ'ըսեմ, կրկնի այն իրական խոցերը՝ զորս
հայրենիքի ստաւապանքը արցունքնիրով
պատկերացնող այդ գուժկան թուղթը իւ-
րաքանչիւր բառերուն կուտար իմ կարվէր
օրտիս : Հայոց աշխարհի ճնշուող հոգին կը
խօսէր հոն իր Պարթեւ նահապետին բո-
ղոքարկու չրթներով, ոոյն աշխարհի պոն-
դուխտ մէկ ուղիին, որ անմխիթար սուգի
մէջ ողորակից միայն կրնայ ըլլալ Ձեզ,
Ձեր պատուական հարազատներով, Հմա-
յակով եւ Համազասպեանով որոնք ո'չ նուազ
յուզուեցան Ձեր անակնկալ յայտնութիւն-
ները լսելով : Ձեմ ուզեր խօսիլ Արտաշէսի
եւ նախարարներու մօտին : Առաջինը սր-
ղէն գեռ գահաժառանգ պատանի յուռի
հակամիտութիւններու ախուր ախտանիշ-
ներով ցոյց կուտար թէ կը պատրաստուէր
անարժան զուտին ըլլալու ա'յնքան արժա-
նաւոր հօր մը : Իսկ մասնաւորապէս Սիւն-
եաց նախարարութեան որտակեղբոն ըն-
թացքը կը բացատրուի այն հակառակու-
թեամբ՝ որ սկզբնաւորեցաւ Արտաշէսի
հօրեղբոր իտարովի օրով Արշակունի տան
հանդէպ : Երկուքին ալ կարեւորը փութա-
ցի զրկել, Ձեր յանձնարարութեան համա-
ձայն :

Գտնով Ձեր սրբութեան այն հարցումին
թէ՝ «Հակառակ պարագային բան մը չենք
կրնար ակնկալել Բիւզանդիոնէն, կը պա-
տասխանեմ բացարձակապէս թէ՝ ո'չ : Ա-
մէն ազգ կամ պետութիւն նախ իր ազ-
գին շահը կը խորհի . եւ եթէ կը միջամտէ
օտարի գործերուն՝ պէտք է համոզուած
ըլլալ թէ բացարձակ բարեմտութեամբ չէ
այն : Ազգերու կոխունին ու պայքարները
ես ի կռիւներ ու պայքարներ են : Չանանք
մենք ալ պահել մեր եսը, առանց արտա-

քին միջամտութիւններու : Այս է իմ խո-
նարհ կարծիքը :

Ուր էր թէ անձամբ գտնուէի Ձեր մօտ
եւ ներկայութեամբ մասնակցէի Ձեր ցա-
ւերուն, ինչպէս երբեմն բաժնեկից եղած
եմ Ձեր ուրախութիւններուն :

Սահակ

(Ընդմիջելով)

Երանի՛ թէ :

Վարդան

(Շարունակելով ընթերցումը)

Սակայն ուր որ ալ երթանք՝ հայրենիքը
մեր սրտերուն մէջն է, հո'ն իբր կենդանի
աչքով կը տեսնեմ անաւոր սպանալիքը
կախուած մեր բնաշխարհի զլխուն վերեւ :
Բայց այն կորովը, զոր մինչեւ օրս ցոյց
սուիք Ձեր հայրենասիրական եւ եկեղեցա-
նուէր զգացումներովը խանդավառուած եւ
այն անդրդուելի նկարագիրը, զոր մարմ-
նացուցած էք Ձեր մէջ՝ իբրեւ պատկերը
ազգային ոգիին, վստահ եմ թէ ա'լ աւելի
պիտի զօրանան ներքին եւ արտաքին թըշ-
նամիներու ոսնձգութիւններու դէմ, Ձեզ
օժանդակ ունենալով անձնուրաց եկեղե-
ցականնեւ եւ իշխաններու պատուական
խումբ մը, որով չըջապատուած է Ձեր
սրբութիւնը :

Ձեմ կրնար չլիշել ծերունի եւ ազնիւ
ասպետ եւ մամաւորապէս . . .

(Ձուգեւ շարունակել)

Սմբատ

Կարդա՛, կարդա՛, սիրելիս :

Վարդան

(Կը տատանի եւ յետոյ զգածուած կը շարունակէ)

Ձեզ եւ մեզ հաւատարապէս սիրելի,

Սմբատ

(Ընդմիջելով)

Ամենա'ւա, բոլոր ազգին :

Եղիշե եւ Աղան

Տարկոյս չիկայ :

Վարդան

Շնորհակալ եմ :

(Կր շարունակէ)

Մամբկոնեան Վարդանը, Ձեր քաջարի թողը, որ անշուշտ չէ մոռցած իր նուիրական ուխտը...

(Ընդմիջելով եւ յուզուած)

Մհ, վարդապետ, ինչե՛ր կը յիշեցնես ինձ:

(Կր շարունակէ)

Ուխտ մը զոր առաջին անգամ հայ լեզուով թոթովեց: Այդ թոթովանքի անմեղ ու անգիտակից ուխտը կ'սպասենք որ արտի ու գիտակցութեան իրական ուխտ մ'ըլլայ հիմակ... Հայրենիքը իրմէ կը պահանջէ ինչ որ ինքը առաւ հայրենիքէն. ամենաթանկագին բանը...

(Ստորունկ հառաչ մը կ'արձակէ)

Անհնար պիտի ըլլար վերջացնել թուղթս եթէ հարկ ըլլար դեղանկարել հոն սիրտ մը: Ներեցէք եթէ չկրցայ գոհացնել Ձեր Սրբութիւնը, որուն բնատուր իմաստութիւնը, հեռատես խոհականութիւնն ու հայրախնամ գութը ինձ նման արուպ պաշտօնեայի մը գրիչին կարօտութիւն չունին:

Խնդրելով Ձեր հայրապետական օրհնութիւնները եւ մաղթելով ի սրտէ յաջողութիւն Ձեր բոլոր ազգանուէր ձեռնարկներուն,

Մնամ խոնարհ որդի Ձեր

Մեսրոպ Վարդապետ

(Թուղթը կուտայ Սահակի եւ ինքը կը մտնի արտի մը վրայ մտախոն երկու ձեռքի մատներու ազացումով ծունկը բռնելով):

Սահակ

Օրհնեա՛լ ըլլայ, բիւրիցս օրհնեալ իմ անզուգական վարդապետը:

Եղիշէ

Ձեր Սրբութեան վերջ՝ շա՛տ բան կը պարտինք մենք անոր. նուիրակա՛ն են մեզ համար անոր խօսքերը:

Աղան

Ձայնակից եմ եղիչէ Սրբազանին:

Սմբատ

(Վարդանի)

Իսկ դու՛, Վարդան, չե՞ս խօսիր:

Վարդան

Ի՞նչ խօսիմ, քաջի՛ տապետ. լեզուն կըրնայ միշտ սիրտը թարգմանել... ա՛հ, վարդապետին խօսքերը երբցս նուիրական են մա՛նաւանդ ինձ համար: Հայ սրբազան լեզուս անո՛ր կը պարտիմ: Եթէ պապս գրականապէս վերածնած Հայաստանին հոգին է, նա՛ այդ անստղիւտ վարդապետը հայոց աշխարհի անմահ հրեշտակն է: Անոր թեւերն են հայոց գրերը, որ մեր ազգային կեանքը կը հովանաւորեն, կը զարգացնեն ու կը պահպանեն իրենց մէջ: Ինձ յիշեցուցած է իմ մանկական ուխտը. ես այս առիթով կը յիշեմ նաեւ իմ հայրապետ պապուս մարդարէական ոգիով ըսած մէկ խօսքը. «Թերեւս քեզ համար ալ խաչի կեանք մը պատրաստուած է» եւ թէ՛ «Իմ գերեզմանս քու յաղթական խաչովդ պիտի հրճուի»:

(Ոտի ելելով, յուզուած՝ կեկերուն, այլ կտրովի շեշտով մը):

Ահա՛, ուրեմն, մեծ վարդապետիս բողձանքին եւ հայրապետ պապուս յանձնարարութեան համաձայն ու իմ խզճիս վկայութեամբ հոս Ձեր բոլորին առջեւ իմ գիտակից ուխտս կը կատարեմ:

Ընտրեցի խաչի կեանքը ի սէր եւ ի փառս դժբախդ հայրենիքիս:

ՎԱՐՍԱԳՈՅՐԸ ԿՐԶՆԷ

ՎԵՐՋ ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐՈՒԱԾԻՆ

ԸՆԴՈՒՆՈՒԱԾ ԳԻՐՔԵՐ

Ե. ՔԻՉ ՄԸ ԺՊԻՏ, Պատրաստեց Հայկ Չոբուրեան

Ձ. ՍԵՒ ՊԱՏԿԵՐՆԵՐ, 26րդ թիւ ազատ մատենաշարի, յօրինեց Տիգրան Ասեւան

Է. Ազատ մատենաշարի 24 եւ 25 թիւերը. Մկրտիչ Պէշիքթաշեանի ԵՐԵՔ ՔԱՋԵՐԸ եւ ԱՌԱՋԱԿՆԵՐԸ:

ՀԱՒԱՏՔԻ ՑՈՒԹԵՐ

Վեց հազար սարկիներէ ի վեր մարդիկ մարդոց առջեւէն կ'անցնին իբր ստուերներ, սակայն և այնպէս մարդկային սեռը զօրաւոր օրէնքներով և անտեսանելի ըզզացումով մը պաշտպանուելով զգայարանային պատրանքներու դէմ, մահուան մէջ ուրիշ բան չտեսաւ լայց եթէ գոյութեան փոփոխութիւն մը, և հակառակ սոսկալի բաղձանքներով զեղծած մէկ քանի միտքերու ընդդիմութեանց՝ միշտ պահպանեց իբրեւ ընդհանուր բանականութեան վարդապետութիւն մը՝ հոգոյ անհանձնելի գերագոյն աւանդը։ Ուրեմն զայն մերժողները թող զատուին մարդկային սեռէն, որ չընդունիր թէ որդերու ճարակ լլլան ճշմարտութեան ու արդարութեան սիրովը արտփող սիրտ մը և իմացականութիւն մը որ զԱստուած կը ճանչնայ։

ԼԱՄԸՆԷ

Գիտակցութիւնը երկրորդ ապացոյց մը կ'հայթայթէ մեր հոգոյ անհանձնելի։ Ամէն մարդ իր սրտին մէջ ունի դատարան մը, ուր կ'սկսի իր անձն իսկ դատել, գերագոյն դատաւորի վճիռին հաստատման սպանելով։ Եթէ մոլութիւնը մեր կազմուածքին փրկիքական մէկ հետեւութիւնն է, ո՛ւսկից կուգայ այն վախը որ յաջողած յանցաւորի մը աչքերը կ'իւրովէ։ Ինչո՞ւ համար խղճի խայթը այնքան սոսկալի է որ մարդիկ յաճախ նախամեծար կ'համարեն իրենց անձերը աղքատութեան և առաքինութեան ամէն խտութիւններուն հետեւելու քան թէ անիրաւ ստացուածքներու տէր ըլլալ։ Ինչո՞ւ համար ձայն մը կայ արիւնին մէջ և խօսք մը քարին մէջ։

ՇԱԹՊՐԻԱՆ

Արդի մշակութիւնը այլեւս կ'ուզէ ընդունիլ միայն մէկ Աստուած, այսինքն բանականութեան յաւիտենական օրէնքներու Աստուածը։

ՀԱՐԴՄԱՆ

Ժողովուրդը չգիտեր Բնագնացութիւն բառը, լայց կ'զգայ թէ անոր համար կրօնքէն կ'լինելէ ճշմարտութիւնը, վստայի

ան կուտայ իրեն ճշմարտութիւնը, որուն կ'հետեւի ընդհանուր զիտութիւնը, գիտութեանց գիտութիւնը, այսինքն է փիլիսոփայութիւնը։— միակ և յաւիտենական ճշմարտութիւնը որ կարող է գոհացնելու թէ՛ անոր ընդունցական անգիտակից պէտքը և թէ՛ կրօնական պէտքը։

ՀԱՐԴՄԱՆ

Ամէնէն մոլեռանդ անասունածնէն ու ամենէն անտարբեր սկեպտիկներն իսկ, ինչ որ ալ խորհին, բացարձակապէս անկրօն չեն։ Անգայտացած կրօնք, բայց տակուին կրօնք կը չնչեն, ինչպէս ա՛յն մարդիկ, որոնք կ'վախնան օդէն, բայց դեռ օդ կը չնչեն, նոյնիսկ բոլոր բերանային ելքերէ։

ՄՕՐԻՍ ԹԱԼՄԷՅՐ

Կրօնքը միշտ հոգիի հետ կապ ունի, հոգեպաշտութիւնը միշտ լաւագոյն ժամանակներու պտուղը եղած է. միթէ ազատութեան իմաստասիրութիւնը չէ՞ ան, և իմաստասիրութիւնն ալ ճշմարտութեան կրօնքը չէ՞։

ԼԱՊՈՒԼԷՅ

Թարգ. ՏԻՐԱՅՐ ՎԱՐԴԱՊԵՏ

«ՏԱՃԱՐ» Ի ՅՈՒՇԱՏԵՏՐԸ

«Երկնքի ոսկեղբուհ կամարին տակ աղքատ տիեզերք մը կը նշմարեմ», ըսած է ԺԹՊ դարու անգլագական բանաստեղծը իր «Թշուառներ» ու մանուածապատ բաւիղներուն մէջ առաջնորդելով մարդկութիւնը։ Երկար փորձառութեան մը, մանրակրկիտ ուսումնասիրութեան մը, համբերատար պրպտումի մը, թափանցող զննութեան մը և ճշմարտաւէր վերլուծումի մը ողջմտօրէն և ազատախօսօրէն կատարուած ճշմարիտ մէկ եզրակացութիւնն է այս։

Յուստեսութեան վարդապետութիւնը գործ մը չունի հոն, քանի որ բանաստեղծ մաքին հետ իմաստասէրի ամէնէն նուրբ հոգին մարմնացած է յանձին «Թշուառներ» ու մեծ հեղինակին, որ ա՛յնքան կենդանի գոյներով և բնական գծերով գիտէ

նկարել՝ նոյն ճարտարութեամբ և լեզուի միևնոյն պատկերաւորումով՝ մարդկային ապերասան կիրքերը, առաքինութիւնները, կեանքի ազտոտութիւնները, սրբութիւնները, որոնք սակեղբուագ երկնքին տակ աղքատ տիեզերք մը կը վայելեն արդարեւ :

Յոռեան մը կեանքին մէջ որ և է բարձրութիւն չկրնար տեսնել, ինչպէս հնդիկ բարոյամով մը Նիրվանայէն գերազանց վիճակ մը պիտի չկրնար երեակայել : Հիւկօ շատ վսեմ կը գտնէ կեանքը և կ'ուզէ որ իր բովանդակ չքեղութիւնովը փայլի ան : Մարդիկ չխեղաթիւրեն զայն և սղեղ յայտնութիւններով չարապղծեն անոր նուիրական կոչումը :

«Գտնելին մէջ փոխորիկ»ը յարացուցական պատկերն է, ահաւոր ու հրահանգիչ, բանաստեղծական ու հոգեբանական, արտայայտիչ ու խօսուն միանգամայն, կեանքի այն իրադարձութիւններուն՝ որոնք խորհրդաւոր անիւի մը նման կը դառնան միշտ միևնոյն առանցքին շուրջը : Խղճի այրուցն է՝ որ կը բռնկցնէ երեւակայութիւնը և խորհուրդներու բոց մը կը հրդեհէ զգացումներու խարոյկ մը : Եթէ բովանդակ աշխարհ ժան Վալթանի մը վերածնունդն ունենար, եթէ Հիւկօյի մը տեսլականը նոր արշալոյսով մը և ջերմոտ ճանաչումներով ճառագայթէր կեանքի հորիզոնին վրայ, տիեզերքի ազտոտութիւնները պիտի չոգիանային և Մարիուս պիտի ժպտէր Քոզէթի չրթներով մարդկութեան արտերուն մէջ. անձնագոհութեան վսեմ զիւցազնութիւններ պիտի դրուապէին պատմութեան էջերը, անխառն սիրոյ ընծայաբերումները՝ յիմարութիւններէն վեր՝ պիտի գեղանկարէին կեանքի գարունները իրենց բոլոր վայելչութիւններովն ու թուականքովը :

Ասով մէկտեղ «Թշուառները» ժութրդ դարու աւետարանն ըլլալու յաւակնութիւնը չեն կրնար ունենալ բնաւ, վասն զի թշուառները միշտ թշուառներ են, կեանքի տիուր ողբերգութիւնները. իսկ աւետարանը աստուածային ընդունարանն

է նոր կեանքի յաղթանակի աւետիսին : Աւետարանը գուցէ ներշնչարանն եղած է թշուառներուն, իսկ ինքը ներշնչուած է սղեղակի աղբիւրէն :

Գ. ՎԱՐԴ-ԽԱԶ

ԲԱՐԻ ԿԵԱՆՔՆ ՈՒ ԽԱՂԱՆՈՒԹԻՒՆՆ

3. Գ. Մ Ր Մ Ր Ե Ա Ն Ի

ՊԱՏՐԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԵՐԷՆ

1. ԱԼԷԼՈՒՄ՝ տաճնակ իմաստասիրական, տիեզերքի վրայ ազատ բան և օրհնէնք, 7^{1/2}
 2. ՄԱՍՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅ ՄԵՐԱՏՈՒՆԵՐՈՒ՝ 1400էն 1900 հինգ հարիւր մեծ տոմարու պատմութիւն, 10
 3. ԹՈՒՐԲԱՀԱՅՈՑ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՃԱՌԱԿԱՆՔ՝ 150 տարուան վաճառականական պատմութիւն, միակն իր գործնական և շահեկան տեսակին մէջ, 12^{1/2}
 4. ՍՏՈՒԵՐԲ ՀԻՆ ԴԵՄՔԵՐՈՒ՝ Պատմական օրինակելի լրջութիւններ, 5
 5. 19րդ ԴԱՐ ԵՒ ՅՈՎՀ. ՊՐՈՒՍՍՅԻ ՏԷՐՈՅԵՆՑ՝ Պատմութիւն 19րդ դարու Հայոց, 12^{1/2}
- Նուէրի յարմար այս լուրջ գիրքերն ալ կը ծախուին Կ. Պոլիս՝ Պալենց, Աշճեան, Դըլըճեան և Սիւնեաց գրատունները. Բերա՝ Սըլանտիտի գիմաց Գաւնիկ Կիւլէրեանի խանութն և Սկիւտար հեղինակին քով, որուն զիմեղ չահաւոր է գաւառի կանխափրճաւ ու մեծաքանակ գնողներու :

ԱՐՏՕՆԱՏԷՐ

ՀՄԱՅԵԱՆ ԳՀ. ԷՔՍԷՐՃԵԱՆ

ՎԱՐԷ.— ՂԵՒՈՆԴ Ծ.Վ. ԳՈՒՐԵԱՆ
ԽՄԲԱԳՐԱՊԵՏ.—ԳԱՐԵԳԻՆ ՎՐԻ. ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Օսմանեան Գործակցական Ընկերութեան
Պապր Ալի հասթէի Սէփեթիլէր փողոց Թիւ 27

Մարտիրոս
Նիկոմիդիա
Նիւ-Եօրթ
Շ. Գարահիսար
Ուսաֆ
Պանսրմա-Պալքէսէր
Պաղտաս
Պաճրա
Պարսիզակ
Պէրուք
Պրուսա
Ռուսնոֆ
Ռոսոսթ
Սամսոն
Սեբասիա
Սեյանիկ
Սիվրիսար
Սոֆիա
Տարսանէլ
Տեսկալան
Տիարպէիր
Տրապիզոն
Վառնա
Փարիզ
Քեօրահիա
Քեօրքեննէ
Քդի
Ֆիլիպի
Ֆրէզնո

Հոգեւոր Տեսուչ Տ. Եղիշէ Բնյ. Գաղլինեան
Տ. Ոսկի Բնյ. Պիպիեան
Տօքթ. Թիբեաքեան Խան
Դաւնիկ էֆ. Պէյլէրեան
Կարապետ էֆ. Քենեաեան
Առաջնորդ Տ. Կարապետ Ծ. Վրդայ. Մաղլլմեան
« Տ. Մովսէս Ս. Եպիսկ. Կէօմրիւքեան
Աւետիո էֆ. Բէրթմէնեան
Յովհաննէս էֆ. Տ. Կարապետեան
Հոգեւոր Տեսուչ Տ. Եղեկիէլ Վրդայ.
Առաջնորդ Տ. Յովհաննէս Ս. Եպիսկ. Արշարունի
Տ. Մկրտիչ Բնյ. Մրջիկեան
Առաջն. Փոխանորդ Տ. Բարթող Բնյ. Թաքմէնեան
Առաջնորդ Տ. Սահակ Ծ. Վրդայ. Օտապաշեան
« Տ. Թորգոմ Ծ. Վրդայ. Գուշակեան
Հոգեւոր Տեսուչ Տ. Սերովբէ Բնյ. Ներշապուհ
Տ. Յովհաննէս քնյ. Բըշրեան
Տ. Մեսրոպ Բնյ. Տ. Մեսրոպեան
Տ. Դիմիսիոս քնյ. Տրէզեան
Տ. Յուսիկ Բնյ. Դատաւորեան
Առաջնորդ Տ. Ջաւէն Վրդայ. Տ. Եղիսեան
« Տ. Էմմանուէլ Վրդայ. Պալեան
Աւետիս էֆ. Ջարպանէլեան
Հոգեւոր Տեսուչ Տ. Վառնապուհ Բնյ. Քիպարեան
Առաջն. Փոխանորդ Տ. Մեսրոպ Բնյ. Տէօքմէնեան
Տ. Մատթէոս քնյ. Մանիկեան
Առաջն. Տեղապահ Տ. Պսակ Վրդայ.
Տ. Տաճատ Բնյ. Դերձակեան
Ազն. Յակոբ էֆ. Նշկեան

Պալատ մէջ քերթիս վաճառման կեդրոնացեղին է՝

ՕՍՄԱՆԵԱՆ ԳՈՐԾԱԿՑԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ

Պապ Ալի հասսէսի, Սեփեքիլիւր փողոց, Թիւ 27, եւ ֆինանսերու եօզուուր,
Պագրերը՝ Արմենակ Եազրեան եւ Ընկ. գրասունը, իսկ Բերայի մէջ, Մեծ-
Փողոց, Սբ. Եղիշի դէմ ձխավաճառ Դ. Կիւլեբեանի խանութը:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

- 1⁰ Տ. Գնէլ Ծ. Վրդ. Գալէմքեարեան
- 2⁰ Տ. Տիրայր Ծ. Վրդ. Մարգարեան
- 3⁰ Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Դուրեան
- 4⁰ Տ. Գրիգորիս Ծ. Վրդ. Պալաքեան
- 5⁰ Տ. Գարեգին Վրդ. Խաչատուրեան
(Խաչագրապէս)
- 6⁰ Տ. Պարգե Վրդ. Դանիէլեան
- 7⁰ Տ. Հմայեակ Բնյ. Էքսէրճեան
- 8⁰ Տ. Արիստակէս Բնյ. Հրապրեան
- 9⁰ Տ. Ջարմայր Բնյ. Կէօղիւրեան
(Ոգ. Խաչագրապէսի)

ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

- 1⁰ Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Դուրեան
(Վարիչ)
- 2⁰ Տ. Գրիգորիս Ծ. Վրդ. Պալաքեան
- 3⁰ Տ. Հմայեակ Բնյ. Էքսէրճեան
(Արտիստ)
- 4⁰ Տ. Խորէն Բնյ. Յարութիւնեան
- 5⁰ Տ. Սուքիաս Բնյ. Պալաքեան
(Գանձապէս)
- 6⁰ Տ. Պօղոս Բնյ. Պէյազճեան
(Ասեմաղալի)
- 7⁰ Տ. Խորէն Բնյ. Վարդանեան
(Ասեմապէս)
- 8⁰ Տ. Գէորգ Բնյ. Անանեան

«ՏԱՃԱՐ»-Ի
ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ համար տարեկան	35 դուրս
Գաւառաց » »	40 »
Արտասահմանի համար տարեկան	10 ֆրանկ
Ձեռքէ կը ծախուի պրակը	50 փարայ

«Տաճար»-ի վերաբերեալ վարչական գործերու համար պէժ է դիմել
ԴԱՆԻՆԴ Ծ. Վ. ԴՈՒՐԵԱՆ Ի

Իսկ խմբագրական գործերու համար պէժ է դիմել խմբագրապետ
ԴԱՐԵԴԻՆ Վ. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ Ի

ارمنيجه «داجار» غزتهسى اداره خانهسى
باب على جادهسى ابوالسعود زوقانى نومرو ۲۷

Rédaction de la Revue «DADJAR».
27, Rue Sépétdjiler, Av. de la S. Porte, Constantinople. (Turquie).

Խմբագրութիւն «ՏԱՃԱՐ» Կրօնա-եկեղեցական կիսամսեայ հանդէսի
Պապը Ալի ճաստէսի Սէփէթճիլէր փողոց թիւ 27

ԱՐՏՕՆԱՏԻՐ
ՀՄԱՅՆԱԿ ԴԱՀԱՆԱՅ ԷՔՍԷՐՃԵԱՆ